

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
PROCEEDINGS OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA

ISSN 0515-961X

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ
НАУКИ О ЗЕМЛЕ
EARTH SCIENCES



2013

Հանդեսը հիմնադրվել է 1948 թվականին, լույս է տեսնում տարին երեք անգամ
հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով

Գլխավոր խմբագիր՝
Ռ.Տ. ՋՐԲԱՇՅԱՆ

Պատասխանատու քարտուղար՝
Ռ.Ս. ՄՈՎՍԵՍՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝
Ա.Վ. ԱՎԱԳՅԱՆ, Ա.Հ. ԱՂԻՆՅԱՆ, Հ.Ռ. ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ,
Ս.Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Է.Ե. ԽԱՉԻՅԱՆ, Ա.Ս. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ,
Ս.Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Խ.Բ. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ, Ռ.Լ. ՄԵԼԿՈՆՅԱՆ,
Ռ.Տ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ, Ս.Ն. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ, Ն. Հ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Главный редактор
Р.Т. ДЖРБАШЯН

Ответственный секретарь
Р.С. МОВСЕСЯН

Редакционная коллегия
А.В. АВАГЯН, А.О. АГИНЯН, А.Р. БАГДАСАРЯН,
С.В. ГРИГОРЯН, А.С. КАРАХАНИЯН, Х.Б. МЕЛИКСЕТАН,
Р.Л. МЕЛКОНЯН, Р.Т. МИРИДЖАНИЯН, С.Н. НАЗАРЕТЯН,
С.М. ОГАНЕСЯН, Э.Е. ХАЧИЯН, Н. А. ГАБРИЕЛЯН

Editor in Chief
R.T. JRBASHYAN

Senior Secretary
R.S. MOVSESYAN

Editorial Board
A.V.AVAGYAN, A.H. AGHINYAN, H.R. BAGHDASARYAN,
S.V. GRIGORYAN, S.M. HOVHANNISIAN, A.S. KARAKHANYAN,
E.Y. KHACHIAN, Kh.B. MELIKSETIAN, R.L. MELKONYAN,
R.T. MIRIJANYAN, S.N. NAZARETYAN, N. H. GABRIELIAN

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան-19, Մարշալ Բաղրամյանի պող. 24ա
Адрес редакции: 0019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24а
Editorial address: 24a, Marshal Baghramyan ave., Yerevan, 0019, Republic of Armenia
E-mail: geoscience @ geology. am
© Издательство “Гитутюн” НАН РА
Известия НАН РА, Науки о Земле, 2013

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ**

ԹԻՎ 2- 3	ՀԱՏՈՐ 66	2013
-----------------	-----------------	-------------

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Շահինյան Հ.Վ., Զաքարյան Շ.Ս., Գյուլնազարյան Շ.Ա. ՀՀ Կոտայքի և Արմավիրի մարզերի խմելու քաղցրահամ ջրերի էկոլոգահիդրո-երկրաքիմիական բնութագիրը	3
Ավանեսյան Ա.Ս. Ակնարկ երկրաբանական քարտեզագրման աշխատանքների մասին Հայաստանում	15
Առաքելյան Դ.Գ., Նահապետյան Ս.Ա., Զաքարյան Բ.Գ., Մկրտչյան Մ.Կ. Դեբեդ գետի ավազանում ջրածացկման երևույթի ԱՏՀ մոդելավորում	24
Մաթևոսյան Ա.Կ. Հարուցված բեվեռացման ինտեգրալ ամպլիտուդա-ժամանակային չափանիշների դրսևորումը հոսանքի մեկբևեռանի ուղղանկյուն իմպուլսներով երկրաէլեկտրական միջավայրի պարբերական գրգռման դեպքում	40
Թամրազյան Ա.Ա., Հակոբյան Լ.Վ. Նիկելի պարունակության որոշումը ռենտգենառադիոչափական եղանակով քրոմի բարձր պարունակության դեպքում (Ամասիայի շրջանի հանքավայրերի օրինակով)	47
Դարբինյան Ս.Ս. Եվս մեկ ակնարկ սելյամիկ վտանգի մասին	53
Մանասյան Վ.Ն., Տեր-Մինասյան Ռ.Հ. Ուժեղ երկրաշարժի հիդրոլոգիական նախանշանների առանձնացման մեթոդի ներդրման մասին	58
Հարությունյան Մ.Ա. Չանգեզուրի հանքային շրջանի հիդրոթերմալ սերիցիտների բյուրեղաքիմիական առանձնահատկությունները	67
Մաթևոսյան Ա.Կ. Հարուցված բեվեռացման ինտեգրալ ամպլիտուդա-ժամանակային չափանիշների բնութագրվող առանձնահատկությունները նշանափող հոսանքի ուղղանկյուն իմպուլսներով երկրաէլեկտրական միջավայրի պարբերական գրգռման դեպքում	82
Մկրտչյան Մ.Կ. Խզվածքների եռաչափ մոդելավորման համակարգչային ծրագրային հավելվածի մշակում	92

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

Խաչիյան Էդուարդ Եփրեմի (ծննդյան 80-ամյակին)	99
Քոչարյան Արմենակ Եզեկի (ծննդյան 100-ամյակին)	100
Շիրինյան Կոնստանտին Գրիգորի (ծննդյան 90-ամյակին)	103
Քարամյան Կոնստանտին Անդրանիկի (ծննդյան 90-ամյակին)	106

СОДЕРЖАНИЕ

Шагинян Г.В., Закарян Ш.С., Гюльназарян Ш.А. Эколого-гидрохимическая характеристика пресных питьевых вод Котайского и Армавирского марзов РА	3
Аванесян А.С. Очерк работ по геологическому картированию в Армении.	15
Аракелян Д.Г., Нагапетян С.А., Закарян Б.Г., Мкртчян М.К. ГИС моделирование явлений затопления бассейна р.Дебед	24
Матевосян А.К. Проявление интегральных амплитудно-временных пара-	

метров вызванной поляризации при периодическом возбуждении гео- электрической среды однополярными прямоугольными импульсами тока	40
Тамразян А.А., Акопян Л.В. Определение содержания никеля рентге- норadiометрическим способом при высоком содержании хрома (на примере рудных месторождений района Амасия)	47
Дарбинян С.С. Еще об одном подходе к оценке сейсмической опасности	53
Манасян В.Н., Тер-Минасян Р.О. О внедрении метода выделения гидроло- гических предвестников сильных землетрясений	58
Арутюнян М.А. Кристаллохимические особенности серицитов гидротер- мальных метасоматитов Зангезурского рудного района	67
Матевосян А.К. Характерные особенности интегральных амплитудно- временных параметров вызванной поляризации при знакопеременном прямоугольно-импульсном возбуждении геоэлектрической среды	82
Мкртчян М.К. Разработка программного модуля для трехмерного моделирования разломов	92

ПАМЯТНЫЕ ДАТЫ

Хачиян Эдуард Ефремович (к 80-летию)	99
Кочарян Арменак Езекович (к 100-летию)	100
Карамян Константин Андраникович (к 90-летию)	103
Ширинян Константин Григорьевич (к 90-летию)	106

TABLE OF CONTENT

Shahinyan H.V., Zakaryan Sh.S., Gyulnazaryan Sh.A. The eco- hydrogeochemical characteristic of fresh drinkable waters of the Kotayk and Armavir regions of the RA	3
Avanesyan A.S. The overview of works on the geological mapping in Armenia	15
Arakelyan D.G., Nahapetyan S.A., Zakaryan B.G., Mkrtchyan M.K. GIS modeling of the flood phenomena in the Debed River basin	24
Matevosyan A.K. Manifestation of integral amplitude-time parameters of induced polarization under periodic excitement of geoelectrical medium with impulses of direct current	40
Tamrazyan A.A., Hakobyan L.V. Determination of nickel content by the X- ray radiometric method in the case of high content of chromium (by the example of ore deposits in the Amassiya region)	47
Darbinyan S. About one more approach to seismic hazard assessment	53
Manasyan V.N., Ter-Minasyan R.H. On the implementation of the metod of identification of hydrological precursors of strong earthquakes	58
Harutyunyan M.A. Characteristic chrystal-chemical features of the hydrother- mal sericites of Zangezur ore district	67
Matevosyan A.K. Features characterizing the integral amplitude-time criteria of the induced polarization in the case of periodic excitation of the geoelectrical medium with rectangular pulses of the alternating current	82
Mkrtchyan M.K. Development of a software module for three-dimensional modeling of faults	92

MEMORABLE DATES

Khachian Eduard Yepremi (to the 80th anniversary)	99
Kocharyan Armenak Yezeki (to the 100th anniversary)	100
Karamyan Constantin Andraniki (to the 90th anniversary)	103
Shirinyan Constantin Grigori (to the 90th anniversary)	106

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԵՐԻ ԽՄԵԼՈՒ ՔԱՂՑՐԱՀԱՄ
ՋՐԵՐԻ ԷԿՈԼՈԳԱԶԻԴՈՆԵՐԿՐԱՔԻՄԻԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ.Վ.Շահինյան, Շ.Ս.Զաքարյան, Շ.Ա.Գյուլնազարյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24ա, Հայաստանի Հանրապետություն
E-mail: hrshah@sci.am
Հանձնված է խմբագրություն 13.03.2013թ.

Հոդվածի նպատակը Կոտայքի և Արմավիրի մարզերում խմելու նպատակներով օգտագործվող ջրերի կազմերի (որակի) պարզաբանումն է, նրանց դասակարգումը ըստ հիդրոերկրաքիմիական բնութագրերի, դասային պատկանելիության և յուրաքանչյուր դասի տարածվածության աստիճանի որոշումը: Կոտայքի մարզում անջատվել են հիմնական 9 և Արմավիրի մարզում՝ 12 դասի ջրեր: Համառոտ բերվում է նաև մարզերի տարածքների երկրաբանական կառուցվածքը, որն անմիջականորեն պայմանավորում է խմելու քաղցրահամ ջրերի կազմի ձևավորումը և, շրջանառության ընթացքում՝ փոփոխությունները: 2 տարվա ընթացքում կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա տրվել են նաև հանձնարարականներ հետազոտված ջրերի՝ խմելու նպատակներով օգտագործելու նպատակահարմարության վերաբերյալ: Առանձնացվել են այն տարրերն ու միացությունները, որոնց պարունակությունները գերազանցում են ՀՀ-ում սահմանված նորմերը:

Ուսումնասիրությունները կատարվել են 2010-2013թթ. Ընթացքում, ԳՊԿ կողմից ֆինանսավորվող 11-1e323 թեմայի շրջանակներում: Աշխատանքների նպատակը նշված մարզերի բնակավայրերում խմելու նպատակով օգտագործվող ջրերի հիմնական հիդրոերկրաքիմիական բնութագրերի, նրանց դասային պատկանելիության, խմելու համար պիտանելիության պարզաբանումն է, ՀՀ-ում գործող նորմերին համապատասխանության աստիճանի որոշումը և օգտագործման նպատակահարմարության վերաբերյալ հանձնարարականների առաջարկումը: Նմուշարկումները կրել են մոնիտորինգային բնույթ և անհրաժեշտության դեպքում կրկնվել են 3-4 անգամ:

Կոտայքի մարզը տեղակայված է ՀՀ տարածքի կենտրոնական մասում: Գրավում է 2089 քառ. կմ տարածք (Հայաստանի ..., 2007): Հյուսիսից սահմանափակվում է Փամբակի, արևելքից Գեղամա լեռնաշղթաներով, արևմուտքում սահմանակից է Քասախ գետին և հարավում նրա սահմանը տարածվում է Երևանի արևելյան մասից, հատելով Ազատ գետը, մինչև Գեղամա լեռնաշղթայի Սպիտակասար գագաթը: Այսպիսով, մարզը սնող ջրերի ջրհավաք ավազանները տարածվում են հիմնականում Գեղամա լեռնաշղթայի արևմտյան, Փամբակի լեռնաշղթայի հարավային և Ծաղկունյաց լեռնաշղթայի արևելյան և արևմտյան լանջերին:

Փամբալի լեռնաշղթայի լանջերն իրենց ձևով միանման չեն: Հյուսիսայինները կարճ են, գառիթափ, հարավայինները՝ հարթ, մինչև 12-14կմ, կտրտված ձորակներով: Այստեղ արմատական ապարների ելքերը ավելի շատ են և նրանցով են կազմված գառիթափերը: Դեպի Հրազդան գետն ուղղված լանջերը խիստ կտրտված են խորը ձորակներով:

Փամբալի լեռնաշղթայի շերտագրական կտրվածքում մասնակցում են հասակով, ծագմամբ և ջրային հատկություններով ապարների տարատեսակ համալիրներ՝ պալեոգոյից մինչև չորրորդական ներառյալ (Геология ..., 1974): Առավել ջրակալված է լավային գոյացումների համալիրը: Այդ ջրերը շրջանառվում են անդեզիտներում, անդեզիտադալիտներում և անդեզիտաբազալիտներում: Շնորհիվ լայն տարածված ուժեղ ճեղքավորվածության և լավ մերկացվածության, այդ ապարները հանդես են գալիս որպես մթնոլորտային տեղումների և խոնավության լավ կուտակիչներ: Նրանց տակ գտնվող թույլ թափանցելիություն ունեցող հրաբխային գոյացումները նպաստում են լավաներում առանձին ջրհոսքերի գոյացմանը, որոնք, ոչ երկարատև շրջանառությունից հետո, դուրս են գալիս երկրի մակերևույթ լավաների վերջնամասերում, բազմաթիվ աղբյուրների տեսքով:

Մթնոլորտային ջրերը բնութագրվում են ցածր հանքայնացմամբ (100-200 մգ/լ) և հիդրոկարբոնատային, կալցիումային ու հիդրոկարբոնատային, նատրիումային կազմերով:

Ընդհանուր առմամբ լեռնաշղթայի սահմաններում շրջանառվող ջրերը գրունտային են և ճեղքային, ունեն տեղական տարածում մերձմակերևութային ճեղքերում, ինչպես նաև լեռնային հարթավայրերի լանջերի փխրուն գոյացումների հատակային մասերում: Ապարների թույլ ջրաթափանցելիության և ռելիեֆի կտրտվածության հետևանքով գերակշռությունը մակերևութային հոսքին է և ջրերի վարընթաց շարժումը արտահայտված է շատ թույլ (Геология ..., 1974): Ըստ քիմիական կազմի գրունտային ջրերը քաղցրահամ են և գերքաղցրահամ: Նրանց մեծ մասը հիդրոկարբոնատ-կալցիումային, կալցիում-նատրիումային են կամ նատրիում-կալցիումային և հիդրոկարբոնատային, կալցիումային:

Գեղամա լեռնաշղթան տեղադրված է ՀՀ տարածքի կենտրոնական մասում: Այն իրենից ներկայացնում է նոր հանգած հրաբխային գործունեության լանդշաֆտ տեղադրված 2000 մ բացարձակ բարձրությունների վրա: Ջրբաժանային մարզը տեղադրված է 2800-3200 մ բարձրությունների վրա և իրենից ներկայացնում է լավային հոսքերի և ծածկոցների սարավանդային մակերևույթ: Հյուսիսից հարավ ջրբաժանային մարզի բացարձակ նիշերը բարձրանում են՝ 2000-3500 մ:

Լեռնաշղթայի լանջերն ունեն անհամաչափ կառուցվածք: Դեպի Սևանա լիճ թեքված լանջերն ունեն ավելի հարթ անկում՝ ալիքաժամբաձև ռելիեֆով: Դեպի Արարատյան իջվածքն ուղղված արև-

մըտյան լանջերն ավելի թեք են և ունեն հստակ արտահայտված գցվածքներ:

Գեոմորֆոլոգիական կառուցվածքի առումով Գեղամա լեռնաշղթան բաժանվում է 2 մասի՝ հյուսիսային և հարավային, որոնք էական դերակատարություն ունեն Կոտայքի մարզի խմելու քաղցրահամ ջրերի և նրանց կազմի ձևավորման գործում: Առաջինը կազմված է ժամանակակից էֆուզիաներով, մեծ մասամբ՝ ուժեղ ճեղքավորված գլաքարային լավաներով և բնութագրվում է ռելիեֆի ձևերի թարմությամբ ու մակերևութային հոսքի բացակայությամբ:

Լեռնաշղթայի հարավային մասն ունի բավականին մեծ բարձրություն և ինտեսիվ մասնատված բարձր լեռնային ռելիեֆ: Բաղկացած է հին միոպլիոցենյան հրաբխաբեկորային հաստվածքից (Геология ..., 1974): Ըստ նույն գրական տվյալների, շրջանի ստորերկրյա ջրերի կազմը հիմնականում կախված է ջրատար ապարների լիթոլոգիական կազմից: Տարածքի հյուսիսային մասի սահմաններում ստորերկրյա ջրերը կապված են առավելապես անդեզիտաբազալտային լավաների և նրանց պիրոկլաստների հետ: Դրանք ջրեր են խմելու համար բացառիկ բարձր որակներով՝ թափանցիկ, առանց համի և հոտի, բավականին սառը՝ 2-10°C: Ընդհանուր առմամբ, լեռնաշղթայի լավային ջրերի հիմնական քանակը մեծ դեբիտով բեռնաթափվում է միջին լեռնային լավային սարահարթերի սահմաններում՝ կենտրոնացված աղբյուրների տեսքով:

Ըստ քիմիական կազմի այդ ջրերը հիմնականում հիդրոկարբոնատային, կալցիումային և հիդրոկարբոնատային, նատրիումային են՝ 0,1-0,5 գ/լ հանքայնացմամբ: Շրջանի հարավային մասը, որը պատկանում է ենթալեռնային լեռնածալքավոր մարզին և հարթավայրերին, բնութագրվում է ջրերի քիմիական կազմերի տարատեսակությամբ:

Աղաբեր-գիպսաբեր ապարների համալիրին հակված ստորերկրյա ջրերն ունեն բարձր հանքայնացում(1-5 գ/լ) և ընդհանուր առմամբ քիմիական կազմում գերակշռում են նատրիումի սուլֆատները և, ավելի հազվադեպ, նատրիումի քլորիդները: Խմելու հիդրոկարբոնատային, կալցիումային ջրերը սովորաբար բնորոշ են աղաբեր-գիպսաբեր և ավազակավային ապարների կոնտակտին, որոնք ծածկված են լավային և հրաբխա-բեկորային գոյացումներով:

Տուֆոգեն ապարներին հակված ջրերը հիմնականում ունեն ոչ մեծ հանքայնացում՝ 0,1-0,5 գ/լ և պատկանում են հիմնականում հիդրոկարբոնատային, կալցիումային դասին, կրաքարային համալիրներում շրջանառվող ջրերը նույնպես հիդրոկարբոնատային, կալցիումային են, 0,5-0,6 գ/լ հանքայնացմամբ:

Այսպիսով՝

1. Գեղամա լեռնաշղթան, որը գրեթե ամբողջությամբ կազմված է պլիոցեն-չորրորդական հրաբխականության պրոդուկտներով, հանդիսանում է ստորերկրյա ջրերի բավականին մեծ պաշարների

ձևավորման մարզ: Լավային ծածկոցներին և նրանց պիրոկլաստներին բաժին է ընկնում ստորերկրյա ջրերի պաշարների գրեթե 96% -ը:

2. Հրաբխային լավաների տարածման մարզերում ստորերկրյա ջրերը ձևավորում են միջլեռնային և ենթալավային ջրահոսքեր կամ ջրակալման գոտիներ: Արտահայտված ջրատար հորիզոնները բացակայում են (բացառությամբ Ակունք-Կաթնաղբյուրի, Սարավանի և Ձորագյուղ-Թագագյուղի իջվածքների, որոնք իրենց մեջ ներառում են ճնշումային ջրեր):

3. Լավային ջրերն ունեն խմելու բարձր որակական հատկանիշներ: Լավաներին հակված ջրերի մոտ 80%-ը օգտագործվում է Երևանի ջրամատակարարման համար (Геология ..., 1974):

Ծաղկունյաց լեռնաշղթան առավել հայտնի է իր հանքային ջրերով և նրա դերը Կոտայքի մարզի խմելու քաղցրահամ ջրերի և նրանց կազմի ձևավորման գործում համեմատաբար փոքր է:

Կոտայքի մարզում բնակավայրերի թիվը 69 է, որից 62-ը գյուղերն են, 7-ը՝ քաղաքները (Հայաստանի ..., 2007): Նմուշարկման են ենթարկվել դրանցից 62-ը (90%): Կոտայքի մարզում կատարվել է 103 նմուշարկում:

Արմավիրի մազը գտնվում է ՀՀ տարածքի արևմտյան մասում և ամբողջությամբ տեղակայված է Արարատյան հարթավայրում: Գրավում է 1242 քառ.կմ տարածք (Հայաստանի ..., 2007): Արարատյան հարթավայրն իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք: Նրա ստորերկրյա ջրերը շրջանառվում են տարբեր տիպի ապարներում, սակայն աղբյուրների մոտ 80%-ը հակված է ջրատար լավային ապարներին: Լճային, տիդմային և ավազակավային ջրատար գոյացումներն ունեն սահմանափակ տարածում, սակայն այստեղ տեղակայված են գետային ջրատար գոյացումների շերտեր: Արարատյան հարթավայրի ստորերկրյա ջրերն ունեն սնման շատ մեծ մարզ, որն ընդգրկում է Գեղամա լեռնաշղթայի հարավարևմտյան լանջերը, Հայկական Պար լեռնաշղթան, Մեծ և Փոքր Արարատները, Արագած լեռը, Կարսի սարահարթը և Արաքս գետի միջին հոսանքները: Ստորերկրյա ջրերի սնման հիմնական աղբյուրը մթնոլորտային տեղումներն են, օդի ջրային գոլորշիների կոնդենսացիան և մակերեսության ջրերի ինֆիլտրացիան: Այդ ջրերի կուտակման և տեղափոխման գործում հիմնական դերը անդեզիտաբազալտային լավաներին է և չորրորդական ենթահունային գոյացումներինը, որոնք ներկայացված են փխրուն-բեկորային տարատեսակներով: Հիմնական ջրամերժ են երրորդական և ավելի հին նստվածքային անջրաթափանց ապարները, որոնք տեղադրված են չորրորդական նստվածքային գոյացումների և, գլխավորապես՝ երրորդական ու չորրորդական ճեղքավոր անդեզիտաբազալտային լավաների տակ:

Կառուցվածքային տեսակետից Արարատյան հարթավայրն իրենից ներկայացնում է միջլեռնային իջվածք՝ շրջափակված բարձր

լեռնային կառույցներով: Լեռնաշղթաների հիմքը կազմող ծալքերը սուզվում են դեպրեսիայի ուղղությամբ, ինչով և որոշվում է ստորերկրյա հոսքի ուղղությունը (Геология ..., 1974):

Արարատյան հարթավայրի ստորերկրյա ջրերը կապված են ապարների տարբեր համալիրների հետ: Ջրատար են պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխային ապարները, որոնք ունեն ամենամեծ տարածումը և ջրատար լավաների հետ կապված է աղբյուրների 80%-ը: Ջրատար են նաև լճագետային գոյացումները:

Տիղմային, ավազակավային, գետային և այլ ջրատար առաջացումներն ունեն զգալիորեն փոքր տարածում և համեմատաբար փոքր դերակատարում հարթավայրի ընդհանուր ջրային հաշվեկշռում:

Ընդհանուր առմամբ, հարթավայրի ջրերը, կախված ապարների տարբեր լիթոլոգիական տարատեսակներից իրենց հակվածությունից, ստորաբաժանվում են. շերտային ջրեր, ձեղքա-ծակոտկենային և ծակոտկենային: Կազմելով հարթավայրի ընդհանուր հիդրոերկրաբանական բնութագիրը, սրանք բաշխվում են ըստ երեք հիմնական հորիզոնների. գրունտային ջրերի հորիզոն, առաջին ճնշումային ջրատար հորիզոն և երկրորդ ճնշումային ջրատար հորիզոն:

Հիդրոերկրաքիմիական տեսանկյունից, ազատ ջրափոխանական գոտում անջատվել են երեք հիմնական տիպեր հիդրոկարբոնատային, սուլֆատային և քլորիդային: Ամենամեծ տարածումն ունեն առաջին տիպի ջրերը, որոնց քիմիական կազմը ձևավորվում է անմիջականորեն ինֆիլտրացիոն ջրերի և էֆուզիաների փոխներգործությունից: Եվ հանքայնացման տեսանկյունից էլ արտեզյան ավազանի ջրերը ստորաբաժանվում են. քաղցրահամ (մինչև 1 գր/լ), թույլ աղի (1-3 գր/լ) և աղի (3-5 գր/լ): Հիմնական տարածումն ունեն առաջինները, որոնք էլ օգտագործվում են խմելու համար:

Մարզի բնակավայրերը 98-ն, որոնցից 95-ը գյուղերն են և 3-ը քաղաքները (Հայաստանի ..., 2007): Նմուշարկման են ենթարկվել դրանցից 75-ը (76,5%): Արմավիրի մագում նմուշարկումների թիվը կազմում է 149:

Բոլոր նմուշարկումները կատարվել են այն կետերում, որոնցից անմիջականորեն օգտվում են սպառողները (ծորակներ, ցայտաղբյուրներ, հուշաղբյուրներ), ընտրելով այն ջրերը, որոնք կամ ամբողջովին են սնում տվյալ բնակավայրը, կամ կազմում են մատակարարվող ջրերի հիմնական մասը: Մի քանի հիմնական սնուցում ունեցող բնակավայրերում նմուշարկումները կատարվել են տարբեր կետերում՝ հնարավորության սահմաններում ընդգրկելով տարբեր խողովակաշարերով մատակարարվող ջրերը:

Ջրերի բոլոր նմուշները հետազոտվել են ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հիդրոերկրաքիմիայի լաբորատորիայում, ավանդական արբիտրաժային (Резников..., 1963) և ֆիզիկաքիմիական (Салихджанова ..., 1988) մեթոդներով: Որոշվել են NH_4^+ , Na^+ , K^+ , Ca^{2+} , Mg^{2+} , $\text{Fe}_{\text{ընդհ.}}$, F^- , Cl^- , SO_4^{2-} , HCO_3^- , NO_3^- , NO_2^- , H_4SiO_4 , pH, ընդհանուր կոշտություն, ընդ-

հանուր հանքայնացում, ինչպես նաև Cu^{2+} , Zn^{2+} , Pb^{2+} , Cd^{2+} : Ըստ Կուրլովի բանաձևի ի հայտ է բերվել յուրաքանչյուր նմուշի դասային պատկանելիությունը և պարզվել է, որ Կոտայքի և Արմավիրի մարզերում ընդհանուր առմամբ շրջանառվում են ավելի քան 30 դասի խմելու քաղցրահամ ջրեր: Հաշվի առնելով կատիոնային շարքի բաղադրիչների փոփոխականությունը՝ կախված բազմաթիվ արտաքին գործոնների ազդեցությունից, ինչպես նաև կրկնման հաճախականությունը, կատարվել է դասերի խմբավորում ըստ բանաձևում անիոնների ամբողջ շարքի և կատիոնային շարքի հիմնականում առաջին երկու բաղադրիչների, ինչի արդյունքում ստացվել է, որ Կոտայքի մարզում շրջանառվող ջրերը հիմնականում կարող են բնութագրվել 9 (աղ. 1) և Արմավիրի մարզում՝ 12 դասի (աղ. 2) ջրերով:

Աղյուսակ 1

Կոտայքի մարզի խմելու քաղցրահամ ջրերի դասային պատկանելիությունը և նրանց տարածվածության աստիճանը, %

h/ h	Դասը	Տարածվածության աստիճանը, %	h/ h	Դասը	Տարածվածության աստիճանը, %
1	$\frac{\text{HCO}^3\text{Cl}}{\text{CaMgNa}}$	31,1	6	$\frac{\text{HCO}^3\text{SO}^4}{\text{MgCaNa}}$	0,97
2	$\frac{\text{HCO}^3\text{Cl}}{\text{MgCaNa}}$	4,9	7	$\frac{\text{HCO}^3\text{SO}^4}{\text{CaMgNa}}$	9,71
3	$\frac{\text{HCO}^3}{\text{CaNaMg}}$	11,7	8	$\frac{\text{HCO}^3\text{SO}^4\text{Cl}}{\text{CaMgNa}}$	16,5
4	$\frac{\text{HCO}^3\text{ClSO}^4}{\text{CaMgNa}}$	5,8	9	$\frac{\text{HCO}^3\text{NO}^3\dots}{\text{CaMg} \dots}$	2,9
5	$\frac{\text{HCO}^3\text{ClSO}^4}{\text{MgNaCa}}$	16,5			

Բոլոր հետազոտված տարրերն ու միացություններն ունեն պարունակությունների տատանման լայն տիրույթ (աղ. 3), որը հիմնականում համապատասխանում է ՀՀ-ում ընդունված նորմերին (Зоны ..., 2002): Օրինակ, բոլոր հետազոտված մետաղների պարունակությունների արժեքներն ընդունված նորմերից շատ ավելի ցածր են: Սակայն որոշ բաղադրիչներ ունեն պարունա-

կությունների այնպիսի արժեքներ, որոնք պահանջում են հատուկ ուշադրություն: Դա ազոտի միացություններն են, ընդհանուր հանքայնացումը և ընդհանուր կոշտությունը, որոնց համար գրանցվել են զգալի և կայուն շեղումներ: Այդ արժեքների և տարածվածության մասին տվյալները ներկայացված են աղ. 4-ում, որտեղ բերվում են մեկ և ավելի անգամներ հետազոտությունների արդյունքում գրանցված բոլոր շեղումները:

Աղյուսակ 2

Արմավիրի մարզի խմելու քաղցրահամ ջրերի դասային պատկանելիությունը և նրանց տարածվածության աստիճանը, %

h/ h	Դասը	Տարածվածության աստիճանը, %	h/ h	Դասը	Տարածվածության աստիճանը, %
1	$\frac{HCO^3 SO^4 Cl}{CaMgNa}$	9,4	7	$\frac{SO^4 ClHCO^3}{NaMgCa}$	4,0
2	$\frac{SO^4 HCO^3 Cl}{CaMgNa}$	4,7	8	$\frac{HCO^3 SO^4}{MgCaNa}$	2,7
3	$\frac{HCO^3 SO^4 Cl}{MgCaNa}$	25,5	9	$\frac{HCO^3 SO^4}{CaMgNa}$	1,3
4	$\frac{HCO^3 ClSO^4}{MgNaCa}$	12,8	10	$\frac{SO^4 HCO^3 Cl}{NaMgCa}$	8,0
5	$\frac{HCO^3 ClSO^4}{CaMgNa}$	10,2	11	$\frac{HCO^3 Cl}{CaMgNa}$	18,1
6	$\frac{HCO^3 Cl}{MgNaCa}$	2,7	12	$\frac{HCO^3}{CaMgNa}$	0,7

Այսպես, ազոտի միացություններից (դրանք անտրոպոգեն ազդեցության արդյունքում ջրերի աղտոտման հիմնական գործոններից են) նիտրատ-իոնի պարունակություն դիտվում է ինչպես Կոտայքի, այնպես էլ Արմավիրի մարզերի բոլոր հետազոտված ջրերում: Նիտրիտ-իոնի պարունակություն հազվադեպ է գրանցվում, իսկ ամոնիումը գործնականում չի հայտնաբերվել: Ինչպես հայտնի է, ըստ տոքսիկ հատկությունների ազոտի այս միացու-

թյունները կազմում են հետևյալ շարքը $\text{NO}_2^- > \text{NH}_4^+ > \text{NO}_3^-$ (Крайнов ..., 1987): NO_2^- -ի փոքր պարունակություններն ամենայն հավանականությամբ կապված են ջրերի աղտոտումից հետո տվյալ միջավայրում նրա հիմնական մասի արագ նստեցման հետ, իսկ մնացորդը թթվածնային արգելապատնեշի վրա ինտենսիվ օքսիդանում է մինչև NO_3^- , որն արդեն հայտնաբերվում է զգալի քանակներով: ՀՀ-ում նիտրատ-իոնի ընդունված թույլատրելի սահմանային կոնցենտրացիան (ПДК) 45 մգ/լ է: Նախկինում կատարված հետազոտությունները գրանցել են զգալիորեն փոքր, սակայն տատանվող քանակներ, ինչը նշանակում է, որ աղտոտումը կրում է անտրոպոգեն բնույթ: Դա, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ջրերի ոչ լավ մեկուսացմամբ և չի բացառվում նրանց հետագա առավել զգալի աղտոտումը: Հետևաբար, կարծում ենք, որ նիտրատ-իոնի պարունակությանը հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև ԹՄԿ չգերազանցող, բայց նրան մոտ արժեքների դեպքում:

Մյուս 2 բաղադրիչները, որոնց պարունակության բարձր արժեքներ են գրանցվել շատ բնակավայրերում և որոնք բնութագրում են ջրերի որակական արժեքը և խմելու համար նրա պիտանելիության աստիճանը հիդրոերկրաքիմիական տեսանկյունից, ընդհանուր հանքայնացումն ու ընդհանուր կոշտությունն են:

Ընդհանուր հանքայնացման բարձր արժեքները հիմնականում ձևավորվում են HCO_3^- , Ca^{2+} և H_4SiO_4 -իոնների հաշվին, սակայն առանձին-առանձին նրանց պարունակությունների անթույլատրելի արժեքներ չեն գրանցվել: Ընդհանուր հանքայնացման ԹՄԿ սահմանված է մինչև 1 գ/լ, սակայն, ինչպես երևում է աղ. 4-ից, Արմավիրի մարզի շատ բնակավայրերում այն գերազանցվում է: Նույնը կարելի է ասել նաև ընդհանուր կոշտության մասին, ինչը պայմանավորված է կալցիումի և մագնեզիումի պարունակությունների մգ-էկվիվալենտների գումարային բարձր արժեքներով:

Կոտայքի մարզում այս առումով իրավիճակը շատ ավելի բարվոք է: Բացի նիտրատ-իոնից, բոլոր հետազոտված տարրերի և միացությունների պարունակությունները նորմերի սահմաններում են: Սահմանաված նորմերի գերազանցում գրանցվել է միայն նիտրատ-իոնի համար և միայն 1 դեպքում (Լեռնակերտ, 140 մգ/լ), սակայն գերազանցումն այնքան մեծ է և կայուն, որ այդ ջրի օգտագործումը խմելու նպատակներով համարում ենք խիստ անցանկալի: Նորմայից ցածր, սակայն ուշադրության արժանի են Կապուտանում, Կաքավաձորում և Աբովյանում գրանցված արժեքները: Դրանք պահանջում են մշտական հսկողություն և լրացուցիչ աշխատանքներ՝ աղտոտման աղբյուրները հայտնաբերելու նպատակով:

Արմավիրի մարզի ջրերում ուշադրության է արժանի նաև սուլֆատ-իոնի դերը: Նրա պարունակությունները չեն գերազանցում սահմանված նորմերը, սակայն Կուրլովի քանաձևում շատ հաճախ

SO₄²⁻-իոնը զբաղեցնում է երկրորդ տեղը անիոնների շարքում և երբեմն՝ նաև առաջինը: Հայտնի է, որ սուլֆատ-իոնը հիմնականում ունի հանքածին և մասամբ պետրոծին բնույթ: Ձևավորվում է հիմնականում սուլֆիդների օքսիդացման և սուլֆատների անցման արդյունքում և մասամբ էլ կարող է ներկրվել մթնոլորտից: Արմավիրի մարզի համար ակնհայտ է նաև անտրոպոգեն գործունեության ազդեցությունը: Դա, այսպիսով, նշանակում է, որ ջրում շարունակում են ընթանալ օքսիդացման պրոցեսներ և ջրի կազմի ձևավորումը դեռևս չի ավարտվել: Հետևաբար, սպասելի են ջրի կազմի տատանումներ, որոնք կարող են բերել որակի անցանկալի փոփոխությունների: Նշենք, որ սուլֆատային և հիդրոկարբոնատ-սուլֆատային կազմի ջրերի տարածվածությունը կազմում է 20-ական տոկոս:

Կոտայքի մարզում սուլֆատային կազմի ջրեր ընդհանրապես չեն գրանցվել, իսկ հիդրոկարբոնատ-սուլֆատայինների տարածվածությունը կազմում է մոտ 10%:

Այսպիսով, Կոտայքի մարզում անջատվել են հիմնական 9 դասի և Արմավիրի մարզում՝ 12 դասի ջրեր:

Կոտայքի մարզում ՀՀ-ում ընդունված ԹՄԿ գերազանցող և նրան մոտ արժեքներ գրանցվել են միայն նիտրատ-իոնի համար:

Արմավիրի մարզում նման արժեքներ գրանցվել են նիտրատ-իոնի, ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության համար:

Աղյուսակ 3

Հիմնական տարրերի և միացությունների սահմանային
պարունակությունները

Արմավիրի և Կոտայքի մարզերի խմելու քաղցրահամ ջրերում, մգ/լ

Տարրեր և միացություններ	Արմավիրի մարզ				Կոտայքի մարզ			
	2011		2012		2011		2012	
	Սահմանա- փին պարու- նակություն	Միջին ար- ժեք	Սահմանա- փին պարու- նակություն	Միջին ար- ժեք	Սահմանա- փին պարու- նակություն	Միջին ար- ժեք	Սահմանա- փին պարու- նակություն	Միջին ար- ժեք
Na ⁺	8.28-327.38	82.39	8.03-346.0	82.99	3.45-99.32	16.50	2.3-54.26	16.90
K ⁺	1.5-12.5	5.32	2.0-11.22	5.60	0.5-27.5	3.67	0.29-39.0	4.33
Ca ²⁺	5.76-203.52	72.75	22.6-203.47	72.71	5.76-120.0	25.81	4.91-98.91	29.69
Mg ²⁺	3.5-139.23	44.77	9.14-129.05	44.54	1.75-40.81	12.02	2.09-26.49	13.20
Cl ⁻	6.3-351.9	72.61	13.68-348.84	69.19	2.8-171.11	16.55	2.07-60.03	15.49
SO ₄ ²⁻	3.29-924.23	184.99	4.94-914.35	187.28	3.7-113.57	15.68	3.29-75.31	15.43

HCO ₃ ⁻	42.7-612.2	300.0	117.12-536.8	302.69	30.5-433.1	131.12	30.5-280.6	146.53
NO ₃ ⁻	1-80	12.7	4-70	14.27	0.3-140	7.95	1.0-140.0	14.08
Ընդհ. հանք.	99.74-2202.72	821.67	252.1-2227.5	847.18	75.94-931.68	280.82	69.32-755.33	307.26
Ընդհ. կոշտ. մկ/էկվ	0.58-18.42	7.24	2.03-17.3	7.29	0.48-8.4	2.28	0.5-6.87	2.57
pH	6.27-8.18	7.34	6.29-7.98	7.37	6.67-8.56	7.69	6.14-8.48	7.49

Աղյուսակ 4

Արմավիրի և Կոտայքի մարզերի որոշ բնակավայրերի ջրերում
բաղադրիչների անոմալ և նրան մոտ պարունակություններ
(բերվում են մոնիտորինգային բոլոր գրանցումները)

Արմավիրի մարզ				
h/h	Բնակավայր	NO ₃ ⁻ , մգ/լ	Ընդհանուր հանքայնացում, մգ/լ	Ընդհանուր կոշտություն մկ/էկվ
		ՀՀ-ում ընդունված նորմեր		
		45	1000	7
1.	ք.Մեծամոր	20	1090,72	11,36
2.	ք.Արմավիր	20, 25	1094,26, 1100,51	10,50, 10,77
3.	Հոկտեմբեր (Սարդարապատ)	50, 80	1145,92, 1160,10	10,07, 17,31, 10,58
4.	Տավորիկ	25, 32, 30	2043,09, 1235,12, 2068,86, 2082,26	18,16, 17,29
5.	Հուշակերտ	22, 20		
6.	Նոր Արմավիր	28		7,89
7.	Ջրառատ	60	1733,11	14,75
8.	Մյասնիկյան	25, 24	2070,40, 2202,72, 2227,50	17,40, 18,42, 17,30
9.	Բամբակաշատ	80, 70	1239,28	11,22
10.	Գրիբոյեդով	20, 36		7,94
11.	Առատաշեն	20, 20	1037,14, 1058,70, 1132,69	11,63, 11,51, 11,28
12.	Արաքս	20	1085,62, 1024,51, 1065,28	
13.	Նոր Արտագերս	28		
14.	Նորավան		1015,06, 1034,08, 1023,39	10,12, 10,58, 10,11
15.	Լուկաշին		1132,03, 1062,88, 1107,07	11,08, 11,27, 10,66
16.	Խանջյան		1174,05, 1169,23, 1171,41, 1169,06	10,78, 10,88, 11,51, 11,00
17.	Նաիրի		1000,39, 1095,74	9,36
18.	Լեռնագոգ		1065,28, 1119,84	10,31, 10,39
19.	Դալարիկ		1343,91, 1309,88, 1423,70	10,93, 12,24, 12,16
20.	Վանանդ		1490,16, 1441,05	8,15
21.	Բաղրամյան ավան		1351,19, 1349,87, 1361,69	10,93, 11,07, 10,56
22.	Երվանդաշատ		1107,51, 1159,94, 1185,34	8,97, 10,00, 9,96
23.	Շենիկ		1096,76	10,43, 8,36
24.	Արգինա			8,53
25.	Ակնաշեն			9,51, 10,05

26.	Գայ			8,82, 8,23
27.	Լուսազյուղ			9,11, 9,55, 8,46
28.	Տարոնիկ	20,00	1132,69	14,07, 8,62, 12,60
Կոտայքի մարզ				
1.	Լեռնակերտ	140, 140		
2.	Ձորաղբյուր	40, 24		
3.	Հացավան	20		
4.	Կապուտան	45		
5.	Կաքավաձոր	30		
6.	Ֆանտան	20		
7.	Աբովյան	36		

Երկու մարզերում էլ խմելու համար առաջին հերթին անցանկալի են համարվում նիտրատ-իոնի ԹՄԿ-ն գերազանցող և նրան մոտ արժեքներ ունեցող ջրերը, ապա՝ մոտ 10 տոկոս տարածվածություն ունեցող հիդրոկարբոնատ-սուլֆատային կազմով ջրերը Կոտայքի մարզում և սուլֆատային ու հիդրոկարբոնատ-սուլֆատային կազմերով ջրերը, որոնք ունեն 20-ական տոկոս տարածվածություն Արմավիրի մարզում: Այս բաղադրիչներն անմիջականորեն վկայում են ջրերի՝ աղտոտումից մեկուսացված չլինելու մասին: Նպատակահարմար չենք համարում նաև ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության բարձր արժեքներ ունեցող ջրերի օգտագործումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Геология Армянской ССР. Т.VIII. Гидрогеология. Изд. АН Арм.ССР. Е., 1974. 392 с.
Крайнов С.Р., Швец В.М. Геохимия подземных вод хозяйственно-питьевого назначения. М., «Недра», 1987. 237 с.
Резников А.А., Муликовская Е.П., Соколов И.Ю. Методы анализа природных вод. Гос. научно-техническое изд. литературы по геологии и охране недр. М., 1963. 404 с.
Салихджанова Р.М.-Ф., Гинзбург Г.И. Полярографы и их эксплуатация в практическом анализе и исследованиях. М., «Химия», 1988. 160 с.
Зоны санитарной охраны водоканалов и источников водоснабжения питьевого хозяйственного назначения. Санитарные нормы и правила РА. N2-III-A2-2. 2002.
 Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ: Երևան, 2007: 232 էջ:

Գրախոսող՝ Ա.Ադինյան

ЭКОЛОГО-ГИДРОГЕОХИМИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ПРЕСНЫХ ПИТЬЕВЫХ ВОД КОТАЙКСКОГО И АРМАВИРСКОГО МАРЗОВ РА

Г.В.Шагинян, Ш.С.Закарян, Ш.А.Гюльназарян

Резюме

Целью статьи является выявление составов (качества) пресных питьевых вод Котайкского и Армавирского марзов, классификация по гидрохимическим характеристикам и определение классовой принадлежности всех изученных вод, а также выявление степени распространенности каждого класса. В Котайкском марзе выделены 9, в Армавирском – 12 классов. Кратко приводится и геологическое строение территорий марзов, которое непосредственно определяет формирование составов этих вод и их изменение в процессе циркуляции. На основе результатов исследований в течение 2-х лет даны также рекомендации по целесообразности использования исследованных вод в питьевых целях. Выделены элементы и соединения, содержания которых в водах превышают нормы, принятых в РА.

THE ECOHYDROGEOCHEMICAL CHARACTERISTIC OF SWEET DRINKABLE WATERS OF KOTAYQ AND ARMAVIR REGIONS OF THE RA

H.V. Shahinyan, Sh.S. Zakaryan, Sh.A. Gyulnazaryan

Abstract

The aim of the article is to identify the composition (quality) of fresh potable waters used for drinking purposes in the Kotayq and Armavir regions of the RA, to determine their classification according to hydro-geochemical characteristics, and to establish relation of all studied waters to specific classes and the rate of distribution of each class. Nine (9) and 12 main classes of waters have been distinguished in the Kotayq region and in the Armavir region, respectively. The geological structure of the areas of these regions is briefly mentioned, as it directly determines formation of the compositions of these waters and their changes, occurring during the circulation. Based on the results provided by the 2 year-long research, a number of recommendations is given concerning the expediency of use of the studied waters for drinking purposes. Some elements and compounds have been differentiated, the contents of which exceed the norms adopted in the RA.

ԱԿՆԱՐԿ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

© 2013r. Ա.Ս.Ավանեսյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24ա, ՀՀ
E-mail: ashavan48@mail.ru
Հանձնված է խմբագրություն 28.06.2013թ.

Հոդվածի նպատակն է ներկայացնել մասնագիտական հասարակությանը երկրաբանական քարտեզագրման պատմությունը Հայաստանում և նրա կարևոր դերը մեր տարածաշրջանի բարդ երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրման ու պատկերման գործում: Հիշատակվում են բոլոր հիմնական երկրաբանական քարտեզահանման աշխատանքները և քարտեզները, որոնք պահպանվում են Հանրապետական երկրաբանական ֆոնդում և երկրաբանական գիտությունների ինստիտուտի գրադարանում, որոնցից անհրաժեշտ է օգտվել տարբեր կիրառական և գիտական խնդիրները լուծելիս:

Նախաբան. Լավ և գրագետ կազմված երկրաբանական քարտեզը նման է գրավիչ գրքի, որը ընթերցելիս կարելի է ստանալ չափազանց կարևոր և հետաքրքիր տեղեկություններ քարտեզի վրա պատկերված տարածքի երկրաբանական կառուցվածքի վերաբերյալ: Երկրաբանական քարտեզում պատկերված շերտագրության, քարաբանության, հրայնության, տեկտոնիկայի և այլ տվյալների վերլուծության հիման վրա երկրաբանները ստանում են անհրաժեշտ տեղեկություններ հետազոտվող տարածքի տեկտոնական զարգացման և ձևավորման մասին՝ տարածքի երկրաբանական կառուցվածքը, վաղ երկրաբանական անցյալում գոյություն ունեցած հնաշխարհագրական, լանդշաֆտային, կլիմայական պայմանները, կենդանական և բուսական աշխարհը, ինչպես նաև երկարատև երկրաբանական զարգացման պատմության ընթացքում տեղի ունեցած տարբեր երկրաբանական երևույթները՝ ծովայինից ցամաքային ռեժիմի անցումը, ծալքա- և լեռնաառաջացումը, հրաբուխների արտավիժումը, աղետաբեր երկրաշարժերը, սողանքները և այլ բնական աղետներ:

Երկրաբանական քարտեզից տվյալներ են ստանում հետազոտվող շրջանում տարածված տարաբնույթ օգտակար հանածոների, նրանց բաշխման օրինաչափությունների և նոր տեսակների ու հանքավայրերի հայտնաբերման նախադրյալների մասին: Ըստ էության միայն գրագետ տարամասշտաբ երկրաբանական քարտեզները, որոնք կազմված են բոլոր պահանջներին համապատասխան, կարող են վստահելի հիմք ծառայել այս կամ այն տարածքներում որոնողական ու երկրաբանահետախուզական աշխատանքների կազմակերպման, նոր օգտակար հանածոների հայտնաբերման հեռանկարների գնահատման և ի վերջո երկրի համար

վստահելի հանքահումքային հենքի ստեղծման համար: Երկրաբանական քարտեզները նաև հիմք են հանդիսանում ջրաերկրաբանական և ինժեներա-երկրաբանական քարտեզների համար, առանց որոնց հնարավոր չէ քաղաքների, բնակավայրերի, կարևոր օբյեկտների և ձեռնարկությունների ջրամատակարարման ապահովումը, շինարարության նախագծումն ու իրականացումը, սեյսմիկ պայմանների գնահատումը:

Երկրաբանական քարտեզագրության պատմության համառոտ ակնարկ

Ինչպես աշխարհի շատ տեղամասերում, այնպես էլ պատմական Հայաստանի տարածքում երկրաբանական քարտեզագրման տարրերն ի հայտ են եկել հնագույն քաղաքակրթություններում: Արդեն իսկ այդ ժամանակներում սկսեցին զարգանալ արհեստներ՝ կապված աղի, հանքային ներկերի, թանկարժեք ու գունազարդ քարերի, օբսիդիանի, կայծքարերի, շինանյութերի, պղնձի, երկաթի և այլ անհրաժեշտ օգտակար հանածոների որոնման և շահագործման հետ: Երկրաբանական քարտեզագրման տարրերի գիտելիքները կուտակվում էին "հանքագետների" կողմից և փոխանցվում էին սերնդից սերունդ, սակայն նրանց գոյության մասին գրավոր վկայություններ հանդիպում են չափազանց հազվադեպ:

Հայտնի քարտեզներից առաջինը (ըստ Բ.Վիսոցկու), որի վրա պայմանական նշաններով պատկերված է ապարների և միներալների տարածումը, կազմվեց Կուլոնի կողմից Ֆրանսիայում 1644թ: Անգլիացի Լիստերը 1684թ. առաջարկեց քարտեզի վրա տարբեր գույներով նշել ապարների տարատեսակները: Անգլիայում, 1743թ. Պակսը կազմեց քարտեզ, որի վրա տարածված ապարները նշված են եղել գույներով և տառային նշաններով, քարտեզին կցվում էր պայմանական նշանների բացատրությունը: Նույն թվականին ֆրանսիացի Գետտերը հրատարակեց Ֆրանսիայի, Անգլիայի և Գերմանիայի «գեոգնոստիկ» քարտեզը պատկերելով նրա վրա ապարների, հանքաքարերի և հանքային աղբյուրների տարատեսակները: Ռուսաստանում (եթե հաշվի չառնենք հանքային տեղամասերի հին "նկարագրերը" և հատակագծերը) առաջին երկրաբանական քարտեզներից մեկը հանդիսանում է Արևելյան Անդրբայկալիայի ձեռագիր "գեոգնոստիկ" (երկրաբանա-ապարագրական) քարտեզը (մ-բը $\approx 1:20000$), որը կազմվել է Դ.Լեբեդևի և Մ.Իվանովի կողմից:

Իսկական երկրաբանական քարտեզները, կազմված շերտագրության հիմքերի վրա, սկսեցին ի հայտ գալ միայն XIX դարի սկզբում: Շերտագրության հիմքում դրվեցին այդ ժամանակում մշակված սկզբունքները՝ 1 - երկրաբանական մարմինների հաջորդական առաջացման (Ն.Ստեռն, 1669թ.). 2 - կենսաշերտագրական մասնատման և համադրման (Ու.Սմիտի, 1816թ.). 3 - միահասակ նստվածքների ֆացիալ տարանջատման (Ա.Գրեյլի, 1838թ.; Է.Ռե-

նեվե, 1884թ.). 4 – ակտուալիզմի (Չ.Լայել, 1830 - 1833թ.թ.). 5 – ոչ լրիվ շերտագրական և հնէաբանական տարեգրության (Չ.Դարվին, 1859թ.). 6 – էվոլյուցիայի երկրաբանական և կենսաբանական անդարձելիության (Չ.Դարվին, 1859թ.; Լ.Դոլլոյ 1893թ.). 7 – հնէաբանական սուկցեսսիայի սկզբունքը (Ժ. Սուլավու, 1780թ.; կամ Ու. Սմիտ, 1816թ.): Ավելի ուշ սկսվեց կիրառվել նաև երկրաբանական մարմինների սահմանային մակերեսների հասակային միգրացիայի սկզբունքը (Ն. Գոլովկինսկի, 1868թ.):

Երկրաբանական քարտեզագրման զարգացման նոր խթան ծառայեց 1875թ. Միջազգային երկրաբանական համաժողովի կայանալը: Համաժողովի առաջին նստաշրջանում 1878թ. դրված են եղել մրցութային հարցեր՝ երկրաբանական քարտեզագրման, տարբեր ստվարաշերտերի նշանների միասնական անվանակարգի և երկրաբանական քարտեզների համար միասնական նշանների համակարգի, երկրաբանական համակարգերի մասնատման համար բրածո կենդանիների նշանակության, ապարների սահմանազատման հնարավորության ըստ նրանց լիթոլոգիական կազմի, շերտագրական սխեմաների կարգման, երկրաբանական քարտեզների վրա կողաշարժերի ու երակների նշանակման եղանակների վերաբերյալ:

Հայկական լեռնաշխարհի առաջին երկրաբանական սխեմատիկ քարտեզներն ի հայտ եկան 19-րդ դարի վերջին տարիներին: Այդ ժամանակաընթացքում Հերման Աբիխի (1844-1882) կողմից իրականացվեցին հետազոտություններ նվիրված երկրամասի երկրաբանությանն ու լեռնագրությանը: Աշխատանքները ամփոփվել են երեք հրատարակություններում և ուղեկցվում էին տարամասշտաբ երկրաբանական քարտեզներով և սխեմաներով, հետաքրքիր ուրվանկարներով ու պատկերներով: Ամփոփիչ աշխատանքի երրորդ մասը, որը պարունակում էր տեղեկություններ Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի վերաբերյալ, հրատարակության պատրաստվեց Է. Ջյուսի կողմից և լույս տեսավ 1887թ. Գ.Աբիխի մահից հետո: Հատորին որպես հավելված կցվում էր բազմաձևավալ ատլասը, որում հավաքված էին Մեծ և Փոքր Կովկասի բազմաքանակ հետաքրքիր ուրվանկարներ, կտրվածքներ և երկրաբանական քարտեզներ: Հատուկ հետաքրքրություն էին ներկայացնում վերջիններս, և նրանց շարքում Հայաստանի 1:420000 (10 վերստը մեկ դյույմում) երկրաբանական քարտեզը, որի վրա գունային պայմանական նշաններով ցույց էին տրված 28 տարբեր շերտագրական միավորներ ու ապարներ: Այդ ժամանակի համար քարտեզը տալիս էր Փոքր Կովկասի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների մասին բավականին լավ պատկերացումներ:

Ֆ.Օսվալդի (1906) Հայկական լեռնաշխարհի երկրաբանական քարտեզները հանդիսացան 20-րդ դարի սկզբի տարիներում տարբեր հետազոտողների աշխատանքների արդյունքում կուտակված երկրաբանական նյութերի տաղանդավոր ամփոփում:

Սկսած 1923 թվականից, ներառյալ 1942թ., ընդմիջումներով 1928, 1933 և 1934թթ. Կ.Պաֆենգոլցի կողմից կատարվեց Փոքր Կովկասի, այդ թվում և Հայաստանի տարածքի մոտ 70% պլանաչափ 1:420000 և 1:100000 ու երթուղային 1:200000 մասշտաբների երկրաբանական հանույթ: Կազմվեցին միջին մասշտաբի (1:200000) երկրաբանական քարտեզներ: Հայաստանի առանձին տարածքներում, գլխավորապես Ալավերդու ու Կապանի հանքային շրջաններում, այդ տարիներին ուրիշ երկրաբանների կողմից (Համամիութենական Երկրաբանական Ինստիտուտ, Լենինգրադ) կազմվեցին խոշորամասշտաբային (1:42000) երկրաբանական քարտեզներ: Վ.Գրուշևոյի (1937, 1948թթ.), Վ.Կոտլյարի (1937թ.), Ա.Ն.Սոլովյևի (1936թ.), կողմից կազմվեցին 1:100000 և 1:200000 մասշտաբին համապատասխանող Հայաստանի Հանրապետության հարավ-արևելյան մասի՝ Զանգեզուրի հանքաբեր մարզի երկրաբանական քարտեզները:

50-ական թվականներին Ա.Ասլանյանը (1950թ.) կազմեց մերձերևանյան տարածաշրջանի և Արարատյան հարթավայրի (մոտ 6000 քառ.կմ) 1:100000 մասշտաբի երկրաբանական քարտեզը Ա.Առաքելյանի աշխատանքների արդյունքում 1953թ. կառուցվեց Ուրծ-Հայոցձորի լեռնաշղթայի (մոտ 1600 քառ.կմ.) 1:100000 մասշտաբի երկրաբանական քարտեզը Ս.Մկրտչյանը (1953թ.) ստեղծեց Զանգեզուրի հանքաբեր մարզի (մոտ 4000 քառ.կմ.) 1:100000 երկրաբանական քարտեզը:

Նույն թվականներին սկսվեցին Հայաստանի մի շարք շրջանների խոշորամասշտաբ (1:50000) երկրաբանահանույթային աշխատանքները՝ կազմվեցին Փամբակի լեռնաշղթայի կենտրոնական մասի, Հայոցձորի լեռնաշղթայի, Ստեփանավանի շրջանի արևմրտյան մասի, Լավար և Լեջան լեռնազանգվածների (Պ.Եփրեմյան, 1949-1956թթ.), Շամշադինի (Ս.Ավանեսյան, 1949թ.), Կապանի հանքային շրջանի (Գ.Տեր-Մեսրոպյան, 1950թ.) 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզները:

1956թ. հրատարակվեց Կ.Պաֆենգոլցի կողմից ճշգրիտ տեղագրական հիմքի վրա ստեղծված Կովկասի 1:500000 մասշտաբի երկրաբանական քարտեզը, որն արժանացավ միջազգային երկրաբանական կոմիտեի մրցանակի: Նույն մասշտաբի Կովկասի երկրաբանական քարտեզ ամփոփային հիմունքներով Դ.Նալիվկինի խմբագրությամբ հրատարակվեց 1976թ.:

20-րդ դարի երկրորդ կեսերին, հայ երկրաբանների մի ամբողջ համաստեղության (Կ.Մկրտչյան, Գ.Հակոբյան, Հ.Չուբարյան, Զ.Հովհաննիսյան, Վ.Ամարյան, Ա.Վեհունի, Վ.Սաֆարյան, Հ.Թումանյան, Ռ.Խաչատրյան, Ս.Մարտիրոսյան և այլոք) աշխատանքների շնորհիվ խոշորամասշտաբ (1:50000) երկրաբանական հանույթով ծածկվեց Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքը: Կազմվեցին Հայաստանի հյուսիսային և հյուսիս-արևելյան մասի (Հ.Չուբարյան 1969թ., 1970-1975թթ.; Հ.Թումանյան և ուրիշներ, 1964-

1966թ., 1969-1970թթ.; Գ.Հակոբյան և ուրիշներ, 1962-1969թթ.), Արագածի հրաբխային զանգվածի (Վ.Ամարյան, 1965-1972թթ.), Սևանի լեռնաշղթայի (Հ.Չուբարյան և ուրիշներ, 1970-1975թթ.), Վեդի և Արփա միջնագետքի (Ա.Վեհունի, Ռ.Խաչատրյան, 1960-1963թթ.), Միսիանի շրջանի (Ջ.Հովհաննիսյան, Վ.Ամարյան, 1969-1971թթ., Վ.Սաֆարյան 1972-1975թթ.), Հրազդան գետի միջին ավազանի (Ջ.Հովհաննիսյան, 1962թ.) պահանջվող որակի (կոնդիցիոն) երկրաբանական քարտեզներ, որոնք հիմք հադիսացան այդ տարածքների օգտակար հանածոների քարտեզների կազմմանն ու հետագա որոնողական և երկրաբանահետախուզական աշխատանքների նախագծմանը:

Նույն ժամանակաշրջանում Հայաստանի ԽՍՀ գիտությունների ակադեմիայի և ԵՊՀ-ի գիտնականների կողմից գիտահետազոտական և թեմատիկ աշխատանքների շրջանակներում կազմվեցին Սևանի հյուսիս-արևելյան ափի (Ս.Աբովյան, 1961թ.), Ջանգեզուրի հարավ-արևելյան մասի (Վ.Հակոբյան, 1962թ.), Վեդի գետի վերին հոսանքի ավազանի (Վ.Ավետիսյան, Ն.Ազարյան և ուրիշներ, 1963թ.), Երևանի երկրաբանա-տնտեսական շրջանի (Վ.Ավետիսյան, Վ.Հակոբյան և ուրիշներ, 1964-1970թթ.), Մեղրու ներծայթքային պլուտոնի (Հ.Ադամյան, Ա.Վեհունի, 1959թ.) 1:50000 մասշտաբի երկրաբանական քարտեզներ: Մեծածավալ և բազմամյա երկրաբանական գիտահետազոտական ուսումնասիրություններ իրականացվեցին Ջանգեզուրի հանքային շրջանում, ինչի արդյունքում կառուցվեցին Քաջարանի, Ագարակի և ուրիշ հանքային դաշտերի մանրամասն և խոշորամասշտաբ (1:2000, 1:5000, 1:25000) ու ամբողջ հանքային շրջանի (1:50000) երկրաբանական քարտեզներ (Կ.Քարամյան, Ռ.Տայան, Ռ.Ջրբաշյան, Հ.Գույումջյան, Մ.Հարությունյան, Ռ.Սարգսյան և ուրիշներ, 1969-1978թթ.): Թվարկված աշխատանքները շատ մեծ կիրառական նշանակություն ունեցան ինչպես երկրաբանաորոնողական և հետախուզական աշխատանքներում, այնպես էլ ժողովրդական տնտեսության այլ ոլորտներում:

Երևան քաղաքի և նրա մերձակայքի կառուցապատման ու զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ այս տարածքի 1:25000 մասշտաբի հրատարակված երկրաբանական քարտեզը (Ա.Ասլանյան, Յու.Մայադյան, Կ.Կարապետյան, 1982թ.)

1964-1970թթ. ՀԽՍՀ երկրաբանական վարչության աշխատակիցների կողմից Մեղրու ներծայթքային պլուտոնի և հարակից տարածքների սահմաններում իրականացվեցին երկրաբանաորոնողական աշխատանքներ, որոնք ուղեկցվեցին 1:50000 մասշտաբի երկրաբանական հանույթով (Գ.Խոջաբաղյան, Ռ.Հարությունյան և ուրիշներ, 1971թ.): Քարտեզին կից բերվեցին բազմաթիվ հավելվածներ վրադիր քարտեզների տեսքով, որոնց վրա պատկերված էին այդ շրջանում բացահայտված բազմատեսակ օգտակար հանածոների

ուղղակի և կողմնակի (միներալոգիական, երկրաքիմիական, երկրաֆիզիկական և այլն) նախադրյալները:

Հայաստանի երկրաբանական կառուցվածքում զգալի դեր են խաղում նորագույն, պլիոցեն-չորրորդական հասակի հրաբուխները և հրաբխային առաջացումները: Նրանք ծածկում են Ջավախքի, Ծաղկունյաց, Գեղամա, Վարդենիսի լեռների բարձրադիր մասերը և լանջերը, Արագածի լեռնային զանգվածն ու Սյունիքի բարձրավանդակը: Կատարվեցին նորագույն հրաբխականության տարածման շրջանների բազմամյա (1960-1980թթ.) մանրագննին երկրաբանա-ապարաբանական հետազոտություններ, որոնք ուղեկցվում էին այդ տարածքների խոշորամասշտաբ 1:25000, 1:100000 և 1:200000 մասշտաբի երկրաբանա-ապարագրական քարտեզներով և սխեմաներով՝ Արագածի շրջան (Կ.Շիրինյան, Ս.Կարապետյան, Յու.Ղուկասյան և ուրիշներ, 1969-1974թթ.), Ջավախքի լեռներ և Ախուրյան գետի վերին հոսանք (Է.Խարազյան, 1968թ.), Ծաղկունյաց լեռներ (Է.Խարազյան, Ս.Կարապետյան, 1975թ.), Գեղամա բարձրավանդակ (Կ.Կարապետյան, Ս.Կարապետյան, 1965-1969թթ.), Սյունիքի բարձրավանդակ, Կապանի շրջան (Ս.Կարապետյան, Կ.Շիրինյան, Լ.Նահապետյան և ուրիշներ, 1969-1974թթ.), Վարդենիսի լեռնաշղթա (Ս.Շ.Կարապետյան, Է.Խ.Խարազյան, 1976-1980թթ.): Հետազայում այս քարտեզները և ստացված տվյալները ճշտագրվեցին ու ամփոփվեցին թվայնացված նորագույն պլիոցեն-չորրորդական հրաբխականության քարտեզներում՝ ՀՀ տարածքի 1:500000 (Ռ.Ջրբաշյան, Ս.Կարապետյան, Յու.Ղուկասյան, Է.Խարազյան, 2007թ.), Արագածի հրաբխային զանգվածի 1:100000 (Յու.Ղուկասյան, Խ.Սելիքսեթյան, Ռ.Ջրբաշյան, Գ.Նավասարդյան, 2010թ.), Գեղամա և Վարդենիսի բարձրավանդակների 1:100000 (Ս.Կարապետյան, Ռ.Ջրբաշյան, Գ.Նավասարդյան, 2011թ.), Սյունիքի բարձրավանդակի 1:100000 (Ս.Կարապետյան, Ռ.Ջրբաշյան, Գ.Նավասարդյան և ուրիշներ, 2011թ.):

Գիտահետազոտական ուսումնասիրությունների հիման վրա կազմվեց 1:50000 մասշտաբի Արզականի բյուրեղային զանգվածի թերթաքարային համալիրի երկրաբանա-ապարաբանական քարտեզը (Վ.Աղամալյան, 1969թ.):

Երկրաբանական քարտեզագրման աշխատանքները Հայաստանում նոր թափ ստացան 20-րդ դարի 80-ական թվականների վերջում: Ելնելով որակի նկատմամբ նոր պահանջներից և կանխատեսումային-մետաղածնական քարտեզների կազմման խնդիրներից, Հայաստանի տարբեր հանքային և երկրաբանա-տնտեսական շրջանների սահմաններում կատարվեցին խմբակային և մասնագիտացված երկրաբանական խոշորամասշտաբ (1:50000 մասշտաբի) հանութային աշխատանքներ: Կազմվեցին Ստեփանավանի (Ա.Շմիդտ, Վ.Ռոզով, Ա.Ավանեսյան, Վ.Աղամալյան և ուրիշներ, 1978թ., 900 քառ.կմ.) և Շամշադինի (Ա.Շմիդտ, Ա.Ավանեսյան, Ա.Պորտնոյ և ուրիշներ 1982թ., 1100 քառ.կմ.) հանքային շրջանների

Рис.1. Совмещенные графики временных зависимостей параметров вторичного поля $E_{\max} - E(T)$ при пропускании тока (сплошные линии) и $E_{\text{ВП}}^*(T)$ на спаде (пунктирные линии) нормированные по величине $E_{\max} - E_0$ за различные периоды (цифры кривых) разнополярного прямоугольно-импульсного возбуждения электрического поля.

Представленные на рис.1 теоретические зависимости иллюстрируют динамику изменения параметров напряженности вторичного электрического поля при пропускании тока (в импульсе) и на спаде (в паузе) за различные периоды t для трех значений абсциссы максимума производной переходной характеристики ВП по десятичному логарифму времени T_0 (в частности, при $t=1\text{с}$ и $T_0=0.1, 1\text{с}$ и 10с , характеризующих ранние поляризационные процессы). Здесь E_0 – напряженность первичного электрического поля. Сопоставляя рассматриваемые параметры: временные изменения разности напряженностей асимптотического ($E_{\max}$ – суммарная напряженность первичного и вторичного полей при предельной длительности возбуждения) и полного ($E(T)$ – суммарная напряженность первичного и вторичного полей в момент времени T) $E_{\max} - E(T)$ в импульсе, с напряженностью вторичного поля $E_{\text{ВП}}^*(T)$ в паузе за конкретный период, можно представить, как уже с первых периодов возбуждения геоэлектрическая среда переходит в квазиравновесное динамическое состояние. В итоге, при соблюдении **линейности процессов ВП (ЛВП)** независимо от величины соотношения t/T_0 , приведенные кривые, практически не изменяются. Иными словами, при разнополярно-импульсном периодическом изменении внешнего электрического поля величина $E_{\max} - E(T) - E_{\text{ВП}}^*(T)$ практически сразу постоянна и независимо от длительности возбуждения поля и величины временного T_0 , характеризующего наблюдаемые структурно-текстурные особенности геоэлектрической среды (Комаров, 1980; Электроразведка, 1989), отличается от нуля (в отличие от **однополярного прямоугольно-импульсного возбуждения (ОПИ)** электрического поля) (Матевосян, 2013²).

Как следует из рис.1, за какой-то определенный конкретный период кривые, характеризующие изменение напряженности вторичного электрического поля $E_{\max} - E(T)$ и $E_{\text{ВП}}^*(T)$ со временем T , идентично монотонно

убывают. С увеличением T_0 , рассматриваемые временные зависимости постепенно выпрямляются (становятся почти параллельными оси абсцисс). Это связано с тем обстоятельством, что за такой относительно малый наблюдаемый временной интервал ($0.25T/t$) при больших значениях T_0 проследить уменьшение вторичного поля за время одного периода практически невозможно.




Рис.2. Графическое представление интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации Q_3 и W_3 за десятый период разнополярного прямоугольно-импульсного возбуждения электрического поля различной частоты при отсутствии (а) и в присутствии (б) индукционных процессов.

На рис. 2 показаны ИАВП ВП Q_3 и W_3 (Матевосян, 2001²) за десятый период при различных величинах периода колебаний t (нормированных по величине времени T_0) разнополярного прямоугольно-импульсного возбуждения электрического поля при отсутствии (рис. 2а) и при наличии (рис. 2б) индукционных процессов (при $t_0=0.003c$ – абсцисса максимума первой производной переходной характеристики индукционного поля по десятич-

ному логарифму времени и $m=2$ – амплитудный коэффициент (Матевосян, 2011)). На рис. 3 представлены временные зависимости проявления ИАВП ВП Q_3 и W_3 , а также Q_3/t и W_3/t (нормированных по величине времени воздействия – периода t) при РПИ-2 за десятый период (при установившемся динамическом режиме). С целью сопоставления изменения рассматриваемых параметров при различных t шкала времени (абсцисс) представлена отношением T/t (нормирована по величине периода колебаний).




Рис.3. Динамика изменения интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации Q_3 и W_3 за десятый период разнополярного прямоугольно-импульсного возбуждения электрического поля (а), при их нормировании по периоду колебаний (б) и в присутствии индукционных процессов при малых величинах периода возбуждения (в). Шифр кривых – t/T_0 .

Анализ приведенных зависимостей позволяет установить следующее:

- с увеличением периода t наблюдается увеличение амплитуды значений Q_3 , связанное с возрастанием вторичных поляризационных процессов в исследуемой геоэлектрической среде за конкретный период: количеством переносимых зарядов при одном и обратном

направлениях внешнего электрического воздействия как в импульсе, так и в паузе;

- величина нормированного параметра Q_3/t , в отличие от Q_3 , за рассматриваемый временной интервал (*десятый период*) с увеличением t уменьшается, что указывает на относительное уменьшение количества перемещаемых зарядов в единицу времени под воздействием внешнего электрического поля;
- судя по кривым Q_3 и Q_3/t , в начале и конце десятого периода ($T/t=9$ и 10) наблюдается квазиустановившееся состояние поляризации, и с увеличением t происходит относительно постепенно убывающая поляризация среды со значительным уменьшением количества переносимых зарядов в единицу времени (*приблизительное равенство переносимых зарядов при одном и обратном направлениях приложенного электрического поля*);
- с увеличением t (*с уменьшением частоты тока*) за рассматриваемый период наблюдается монотонное увеличение значений W_3 в импульсе и почти квазипостоянное (*незначительное убывание*) его проявления в паузе, связанные с расходом энергии на поляризационные процессы при пропускании тока и его практическим отсутствием на спаде;
- нормированный параметр W_3/t , в отличие от W_3 , уменьшается с увеличением t , тем самым указывая на уменьшение энергетических затрат в единицу времени на поляризационные процессы.

Здесь следует отметить, что при РПИ выбор эффективного временного режима для обнаружения и исследования конкретного геологического объекта практически зависит от длительности импульсов тока, а не от продолжительности возбуждения поля (*общей длительности зарядки*), в отличие от ОПИ. Интенсивность вторичного электрического поля при таком периодическом возбуждении электрического поля в режиме РПИ-2 слабее, чем при ОПИ-2 той же амплитуды, частоты и продолжительности (Электроразведка, 1989; Матевосян, 2001; Матевосян, 2013²).

Теперь представим результаты аналогичных исследований в случае возбуждения электрического поля периодическим переменным прямоугольным током – временным режимом, находящим все большее применение в электроразведочной практике. На рис. 4 приведено графическое представление ИАВП ВП Q_3 и W_3 (Матевосян, 2001²) за десятый период при различных величинах t (*нормированных по величине времени T_0*) переменного прямоугольно-импульсного электрического тока при отсутствии (рис. 4а) и в присутствии (рис. 4б) индукционных процессов (при $t_0=0.003$ с и $m=2$). Временные зависимости проявления параметров Q_3 и W_3 за десятый период, а также нормированных по периоду колебаний параметров Q_3/t и W_3/t для различных значений t представлены на рис. 5.

В результате анализа особенностей и характера проявления приведенных кривых можно констатировать:

- с увеличением периода t наблюдается увеличение амплитуды зна-

чений Q_3 , связанная с возрастанием вторичных поляризационных процессов в исследуемой геоэлектрической среде за конкретный период: количеством переносимых зарядов при одном и обратном направлениях внешнего электрического воздействия;




Рис.4. Графическое представление интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации Q_3 и W_3 за десятый период при возбуждении поля переменным прямоугольным током различной частоты при отсутствии (а) и в присутствии (б) индукционных процессов.




Рис.5. Динамика изменения интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации Q_3 и W_3 за десятый период при возбуждении поля переменным прямоугольным током различной частоты (а), и при их нормировании по периоду колебаний (б) и в присутствии индукционных процессов при малых величинах периода возбуждения (в). Шифр кривых – t/T_0 .

- величина нормированного параметра Q_3/t , в отличие от Q_3 , за рассматриваемый временной интервал (десятый период) с увеличением t уменьшается, что указывает на относительное уменьшение количества перемещаемых зарядов в единицу времени;
- судя по кривым Q_3 и Q_3/t , в начале и конце десятого периода ($T/t=9$ и 10) наблюдается квазиустановившееся состояние поляризации, и с увеличением t происходит относительно постепенно убывающая поляризация среды со значительным уменьшением количества переносимых зарядов в единицу времени (*приблизительное равенство переносимых зарядов при одном и обратном направлениях приложенного электрического поля*);
- за весь рассматриваемый период с увеличением t наблюдается монотонное увеличение значений W_3 при одном и обратном направлениях приложенного электрического поля, свидетельствующее о практически одинаковом расходе энергии в геоэлектрической среде на поляризационные процессы;
- нормированный параметр W_3/t , в отличие от W_3 , уменьшается с увеличением t на протяжении всего рассматриваемого периода, тем самым указывая на уменьшение энергетических затрат в единицу времени на поляризационные процессы в геоэлектрической среде.

Таким образом, при разнополярном периодически импульсном возбуждении электрического поля выбор эффективного временного режима для обнаружения и исследования конкретного геологического объекта практически зависит от длительности импульсов тока, а не от продолжительности возбуждения поля (*общей длительности зарядки*). Интенсивность вторичного электрического поля при таком периодическом возбуждении электрического поля в режиме РПИ-2 слабее, чем при ОПИ-2 той же амплитуды, частоты и продолжительности. На практике такой способ внешнего электрического воздействия считается достаточно эффективным (*высоко помехозащищенным, информативным, производительным и дешевым*) на стадии поисковых работ при исследовании рудных областей (*для выявления областей с вкрапленными электропроводящими минералами*), а также при геокартировании, инженерно-геологических, гидро-геологических, геоэкологических, археологических изысканиях. Установленные в настоящей статье закономерности проявления ИАВП при возбуждении геоэлектрической среды периодическими разнополярными прямоугольными импульсами тока и прямоугольным переменным током в комплексе с фазовыми измерениями (Комаров, 1980; Электроразведка, 1989), позволят достаточно успешно проводить их совместное истолкование с общепринятым определением дифференциальных временных параметров в процессе обработки результатов исследований методом ВП.

ЛИТЕРАТУРА

- Комаров В.А.** Электроразведка методом вызванной поляризации. Л.: Недра, 1980, 391 с.
- Матевосян А.К.** Интегральные амплитудно-временные параметры вызванной поляризации. Доклады НАН Армении, 2001¹, 101, №1, с. 76-83.
- Матевосян А.К.** Определение эквивалентного электрического воздействия по интегральным амплитудно-временным параметрам вызванной поляризации. Доклады НАН Армении, 2001², 101, №2, с. 150-157.
- Матевосян А.К.** Особенности проявления интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации в присутствии индукционных процессов. Доклады НАН Армении, 2011, 111, №3, с. 280-287.
- Матевосян А.К.** Особенности интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации при непрерывном периодическом изменении внешнего электрического воздействия. Изв. НАН Армении, Науки о Земле, 2013¹, 66, №1, с. 48-55.
- Матевосян А.К.** Проявление интегральных амплитудно-временных параметров вызванной поляризации при периодическом возбуждении геоэлектрической среды однополярными прямоугольными импульсами тока. Изв. НАН Армении, Науки о Земле, 2013², 66, № 2-3, с.40-46.
- Электроразведка.** Справочник геофизика. М.: Недра, 1989, в двух книгах – 438 с, 378 с.

Рецензент Аветисян С.

ՀԱՐՈՒՑՎԱԾ ԲԵՎԵՌԱՑՄԱՆ ԻՆՏԵԳՐԱԼ
ԱՄՊԼԻՏՈՒԴՆԱԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՇԱՆԱՓՈՒ ՀՈՍԱՆՔԻ
ՈՒՂՂԱՆԿՅՈՒՆ ԻՄՊՈՒԼՍՆԵՐՈՎ ԵՐԿՐԱԷԼԵԿՏՐԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԳՐԳՈՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Ա.Կ.Մաթևոսյան

Ամփոփում

Հոդվածում բնութագրող երկրաէլեկտրական մոդելի համար կատարված մաթեմատիկական մոդելավորման և թվային հաշվարկներ հիման վրա ներկայացված է հարուցված բնութագման ինտեգրալ ամպլիտուդաժամանակային չափանիշների վարքը պարբերական նշանափոխ իմպուլսային արտաքին էլեկտրական դաշտի գրգռման դեպքում: Երկրորդական էլեկտրական դաշտի չափանիշների արտահայտման հայտնաբերված նոր օրինաչափությունները ստեղծում են անհրաժեշտ նախադրյալներ արդյունավետ էլեկտրահետախուզական ուսումնասիրություններ կատարելու հանքային գոտիներում որոնման աշխատանքների փուլում:

**FEATURES CHARACTERIZING THE INTEGRAL AMPLITUDE-
TIME CRITERIA OF THE INDUCED POLARIZATION IN THE CASE
OF PERIODIC EXCITATION OF THE GEOELECTRICAL MEDIUM
WITH RECTANGULAR PULSES OF THE ALTERNATING CURRENT**

A.K. Matevosyan

Abstract

Based on the mathematical modeling and numerical calculations for the polarized geoelectrical model, this article presents an analysis of the behavior of integral amplitude-time parameters of the induced polarization in case of excitation of the external periodic alternating pulsed electrical field. The revealed new manifestation regularities of the parameters of secondary electric field create necessary prerequisites for efficient realization of the electrical prospecting surveys at the stage of exploration within mining zones.

ԽԶՎԱԾՔՆԵՐԻ ԵՌԱԶԱՓ ՄՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԶԱՅԻՆ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՄՇԱԿՈՒՄ

2013 թ. Մ. Կ. Մկրտչյան

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, 24ա, Հայաստանի Հանրապետություն
E-mail: mushhegh@geology.am
Հանձնված է խմբագրություն՝ 09.10.2013թ.

Խզվածքների, մասնավորապես ակտիվ խզվածքների երկրաչափությունը հստակ պատկերացնելու համար շատ օգտակար կարող են լինել այդ կառույցների եռաչափ գրաֆիկական մոդելները: Խզման դինամիկան, սեզմենտացիան, ինչպես նաև երկրաշարժերի խորությունները, որպես կանոն, արտահայտվում են խզվածքի երկրաչափության առանձնահատկություններում:

Սույն աշխատանքը նվիրված է խզվածքների հարթությունների եռաչափ մոդելավորման համար ստեղծված նոր ծրագրային գործիքին, որը հենվում է մեծ տարածում ունեցող ArcGIS Desktop ծրագրային պլատֆորմի վրա: Գործիքը ստեղծվել և փորձարկվել է Փամբակ-Սևան-Սյունիք (ՀՀ) ակտիվ խզվածքի հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան սեզմենտների եռաչափ մոդելավորման նպատակով:

Ներկայումս աշխարհագրական տեղեկատվական համակարգերը (ԱՏՀ) լայն կիրառություն են ձեռք բերում երկրի մասին գիտությունների բազմաթիվ խնդիրների լուծման ժամանակ:

Այդ համակարգերը մշտապես գտնվում են դինամիկ զարգացման մեջ: Նրանք ժամանակի ընթացքում նոր ֆունկցիոնալ հնարավորություններ են ձեռք բերում: Բարելավումները բխում են գիտության առջև դրված նոր խնդիրներից և օգտատերերի պահանջներից: Դրան նպաստում է նաև նորագույն տեխնոլոգիաների զարգացումը, որն իր հերթին արագացնում է տվյալների վիզուալիզացման գործընթացը և թույլ է տալիս միաժամանակ մշակել առավել մեծ քանակությամբ տվյալներ:

Փամբակ-Սևան-Սյունիք խզվածքի սեզմենտները մոդելավորելիս անհրաժեշտություն առաջացավ ստեղծել (ծրագրավորել) նոր ծրագրային հավելված, որը հնարավորություն կընձեռի եռաչափ մոդելավորել խզվածքների հարթությունները: Նման որոշում կայացվել է այն պատճառով, որ այն միջավայրը, որը մենք օգտագործում ենք մեր տվյալների բազան պահելու և մշակելու համար, օժտված չէ խզվածքների հարթությունները եռաչափ մոդելավորելու հնարավորությամբ:

Ստացված արդյունքները, համադրելով գոյություն ունեցող տվյալների հետ, հնարավորություն կտան առավել լավ հասկանալ խզվածքի երկրաչափությունը, դինամիկան, ապագա երկրաշարժերի խորությունները, ինչպես նաև առանձնացնել երկրակեղևի բլոկները և մոդելավորել նրանց էվոլյուցիան ժամանակի ընթացքում:


Ներմուծվող տվյալները և մոդելավորման մեթոդները

Գործիքը պայմանականորեն անվանել ենք «Structures» և այն աշխատում է ArcMap ծրագրային միջավայրում: Այն ստեղծված է Visual Basic ծրագրավորման լեզվով՝ Visual Basic For Applications (VBA) միջավայրում:

Ծրագրի ճիշտ արդյունքը ապահովելու նպատակով անհրաժեշտ է տեղանքի քարտեզը ներկայացնել համապատասխան կոորդինատային համակարգով և պրոյեկցիայով: Որպես ներմուծվող տվյալ գործիքին անհրաժեշտ է տալ կետային կամ գծային շեյփֆայլ (shapefile)¹: Այդ շեյփֆայլը, որպես ատրիբուտ, իր մեջ պետք է պարտադիր պարունակի կառուցվող եռաչափ մարմնի երկարությունը և տեղադրման էլեմենտները: Բացի այդ, ծրագրում անհրաժեշտ է նշել գծերի կամ կետերի բարձրությունները:

Իհարկե, առավել բազմազան կառուցվածքներ կարելի է ստանալ այն պարագայում, երբ որպես ներմուծվող ֆայլ օգտագործվեն կետային շեյփֆայլերը, քանի որ այդ պարագայում մենք ամեն կետին կարող ենք տալ միմյանցից տարբեր արժեքներ:

Նկ. 1-ում բերված է 2 մոդել՝ ստացված փորձնական տվյալներով, որոնք ցույց են տալիս տարբեր ներմուծվող շեյփֆայլերից ստացվող արդյունքների տարբերությունը:



Նկ. 1: Խզման հարթության եռաչափ պատկերները ստացված ա) գծային շեյփֆայլից բ) կետային շեյփֆայլից:

Որպեսզի կարողանանք տվյալ գործիքը կիրառել խզվածքների մոդելավորման համար, անհրաժեշտ է, որ այն օժտված լինի ըստ խորության կոր մակերևույթներ ստեղծելու հնարավորությամբ, քանի որ խզվածքները ունենում են բարդ երկրաչափություն և ըստ խորության կարող են փոխել իրենց անկման անկյունները:

Այդ կորությունները ապահովելու համար գծային կապ ենք հաստատել անկման անկյան և խորության մեծության միջև, որն արտահայտված է քայլերով:

¹ Կետային, գծային կամ բազմանկյունային տիպի վեկտորային ֆայլ, որը կցված է կոորդինատային համակարգին և իր մեջ պարունակում է ատրիբուտների աղյուսակ: Ստեղծվել է ESRI հետազոտական ինստիտուտի կողմից:

$$\alpha = b + kn,$$

որտեղ α -ն հերթական կետի հաշվարկվող անկման անկյունն է, n -ը հերթական քայլի համարը, k -ն գործակից է, որը ցույց է տալիս, թե նախնական ներմուծած անկյունը ամեն քայլին որքանով է ավելանալու կամ պակասելու (այն ծրագրում անհրաժեշտ է ներմուծել) և b -ն՝ ներմուծվող շեփոթայություն (կետային կամ գծային) նշված անկյունն է: Քայլերը ծրագրում անհրաժեշտ է ներմուծել, որը թույլ կտա կառուցվող հարթության նախատեսված երկարությունը բաժանել հավասար մասերի: Այդ հավասար մասերի քանակը կլինի հենց քայլերի քանակը:

Ծրագրում անհրաժեշտ է ներմուծել նաև մեկ այլ թիվ, որը ցույց է տալիս կառուցվող հարթության հատվածը: Երբ քայլերը հասնեն այդ նշված հատվածին, ծրագիրը կփոխի քայլի աճման կամ նվազման հաստատուն թվի (k) նշանը:

Ծրագրում կարելի է սահմանափակել անկյան արժեքը: Դա օգտակար է օրինակ խզվածքների հարթությունների ծաղկային տիպի կառուցվածքները մոդելավորելիս, երբ անկյունը փոխվում է մերձավերելային հատվածում, մինչդեռ խորքում մնում է մոտավորապես հաստատուն (նկ. 3 - ա): Ծաղկային տիպի կառուցվածքներում մերձավերելային հատվածում խզվածքները նաև ճյուղավորվում են:

Խնդրի նման լուծումը ընտրվել է այն պատճառով, քանի որ հնարավոր չէ ամեն կետի համար ներմուծել խորության և անկյան արժեքների մի ամբողջ աղյուսակ:


Ծրագրից ստացված արդյունքներն իրենցից ներկայացնում են եռաչափ օբյեկտներ՝ կազմված եռանկյուններից (MultiPatch): Վերջնարդյունքում ստացված եռաչափ պատկերը հանդես է գալիս սկզբնական քարտեզի կոորդինատային համակարգով և պրոյեկցիայով:

Ստրև բերվող մոդելներում ներկայացված բարձրությունների եռաչափ մոդելները ստացված են 1:10000 տեղագրական քարտեզներից:

Ծրագրային հավելվածի կիրառման օրինակներ


Գործիքը փորձարկվել է Փամբակ-Սևան-Սյունիք ակտիվ խրզման հյուսիս-արևմտյան և հարավ-արևելյան սեզմենտների մոդելավորման ժամանակ (նկ. 2):

Հյուսիս-արևմտյան սեզմենտը ներկայացված է մի քանի ճյուղերով, որոնցից 2 հիմնական ճյուղերը սահմանափակվում են Ամասիայի փոփ-ափ (օփ-սփ) բլուրը, որը բարձրացված է վերնետներով (Մկրտչյան և ուր., հոդվածը պատրաստման փուլում է):



Նկ. 2: Հայաստանի ակտիվ խզվածքների եռաչափ մոդելը: Սպիտակ գծերով նշված են ակտիվ խզվածքները, իսկ ուղանկյուններով՝ մոդելավորված տեղամասերը:


Դաշտային աշխատանքների դիտարկման արդյունքում այս հատվածի վերաբերյալ կարելի է առաջ քաշել 2 հավանական մոդել, որը և մենք փորձել ենք մոդելավորել՝ ArcScene միջավայրում (նկ. 3): Առաջին տարբերակը իրենից ներկայացնում է ծաղկաձև կառուցվածք (նկ. 3 - ա), իսկ երկրորդ տարբերակը բեք-տրասթ (back-trust, նկ. 3 - բ):



Նկ. 3: Հյուսիս-արևմտյան սեզմենտը և նրա հավանական երկու մոդելները (ա, բ): 1 – խզվածք, 2 – լարվածային դաշտ, 3 – բարձրացում, 4 – ցույց են տալիս խզվածքը բարձրությունների եռաչափ մոդելում:

Այն տեղամասերը, որտեղ խզվածքը մակերեսին հստակ արտահայտված չէ, նշված են գծիկներով:

Փամբակ-Սևան-Սյունիք խզման հարավ-արևելյան սեգմենտը (նկ. 4) ներկայացված է մակերեսին լավ արտահայտված 2 ճյուղերով, որոնք հատում են սառցադաշտային տրոգը: Այդ 2 ճյուղերը վարնետներ են՝ թույլ արտահայտված աջակողմյան կողաշարժով (Karakhanian et al. 1997a; Avagyan, 2001): Հարավային հատվածում այդ 2 ճյուղերը միանում են միմյանց: Ավելի դեպի հյուսիս և դեպի հարավ դրանք մարում են, այնուհետև հյուսիսում արտահայտվում Կառկառի սարավանդի հատվածում: Նրանք, հավանաբար, միանում են նաև խորքում: Վերը նկարագրածը մենք փորձեցինք մոդելավորել ArcScene միջավայրում (նկ. 4):



Նկ. 4: Հարավ-արևելյան սեգմենտը և նրա հավանական մոդելը: 1 – խզվածք, 2 – լարվածային դաշտ, 3 – ցույց են տալիս խզվածքը բարձրությունների եռաչափ մոդելում:

Եզրակացություն

Խզվածքների, որպես երկրաբանական իրական մարմինների, ծավալային ձևաչափերի որոշման, ինչպես նաև, հատկապես, սեյսմիկ վտանգի ճշգրիտ գնահատման համար, կարևոր է հստակ ունենալ ակտիվ խզվածքների եռաչափ մոդելները: Խզման դինամիկան, սեգմենտացիան, ինչպես նաև երկրաշարժերի խորությունները և դրանց հետ կապված էպիկենտրոնների հեռավորությունը հիմնական ակտիվ խզվածքից անմիջապես կապված են այդ խզվածքների հարթությունների եռաչափ երկրաչափության առանձնահատկու-

թյունների հետ: Մեր կողմից մշակված գործիքով կարելի է մոդելավորել այդ առանձնահատկությունները (նույնիսկ բավականին բարդ), որոնք օգնում են առավել խորությամբ վերլուծել և ճշմարտացիորեն ճանաչել խզվածքների հետ կապված պրոցեսները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Avagyan A.** - Estimation des vitesses de déplacement et des périodes de retour des forts séismes sur le système de Faille de Pambak-Sevan-Sunik (Arménie). Segmentation et relations avec l'activité volcanique. 2001, Thèse, Université Montpellier 2.
- Karakhanian, A.S., Trifonov, V.G., Azizbekian, O.G., Hondkarian, D.G.,** 1997a. Relationship of the late Quaternary tectonics and volcanism in the Khonarasar active fault zone, the Armenian Upland. Terra Nova 9, 131-134.
- NorAtom Consortium** - Seismic hazard assessment for the construction site of a new power unit of the Armenian NPP, 2011.
- <http://arcscripsts.esri.com>
- <http://www.source-code.biz/snippets/vbasic/6.htm>

Շնորհակալություն

Հողվածագիրը իր շնորհակալությունն է հայտնում Ա. Ավագյանին, Ս. Նահապետյանին և Դ. Առաքելյանին աջակցության համար:

Գրախոսող՝ Ռ.Միրիջանյան

РАЗРАБОТКА ПРОГРАММНОГО МОДУЛЯ ДЛЯ ТРЕХМЕРНОГО МОДЕЛИРОВАНИЯ РАЗЛОМОВ

М.К. Мкртчян

Резюме

Трехмерное моделирование разломов актуально для визуализации их реальной геометрии и дальнейшего анализа. Кинематика и сегментация разломов, а также положение гипоцентров землетрясений, непосредственно связаны с 3d геометрическими особенностями плоскостей разломов.

Данная работа посвящена разработке нового программного модуля (основанного на платформе ArcGIS Desktop), генерирующего и моделирующего разломы в трехмерной среде. Модуль смоделирован на примере Памбак-Севан-Сюникского активного разлома и протестирован на северо-западном и юго-восточном его сегментах.

DEVELOPMENT OF A SOFTWARE MODULE FOR THREE-DIMENSIONAL MODELING OF FAULTS

M.K. Mkrtchyan

Abstract

Accurate and complete modeling of faults in three dimensions is critical for visualization of their actual geometry and for the further analysis. Fault kinematics and segmentation, and location of earthquake hypocenters are directly related to 3D geometry features of the fault planes.

This article addresses development of a software module (based on ArcGIS Desktop platform) that generates and models faults in three-dimensional medium. The application was modeled by the example of the active Pambak-Sevan-Sunik Fault and tested for its NW and SE segments.

ՀԻՇԱՐԺԱՆ ՏԱՐԵԹՎԵՐ

ԷԴՈՒԱՐԴ ԵՓՐԵՄԻ ԽԱՉԻՅԱՆ
(ծննդյան 80 – ամյակին)



ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի կոլեկտիվը և ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրությունը ի սրտե և ջերմորեն շնորհավորում են Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, կիրառական սեյսմաբանության և ինժեներային երկրաշարժագիտության ասպարեզներում ճանաչված մասնագետ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գլխավոր գիտաշխատող և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի շինարարական մեխանիկայի ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Է.Ե.Խաչիկյանին 80-ամյա հոբելյանի առիթով և ցանկանում առողջություն, ստեղծագործական երկարակեցություն և ամենայն բարիք:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն

ԱՐՄԵՆԱԿ ԵԶԵԿԻ ՔՈՉԱՐՅԱՆ
(Ծննդյան 100-ամյակին)
(1913 – 1986)



Լրացավ Հայաստանի երկրաբանական ծառայության ճանաչված գործիչներից մեկի, Հայաստանի վաստակավոր երկրաբան, 1967-1971թթ. ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրեն, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ ԱՐՄԵՆԱԿ ԵԶԵԿԻ ՔՈՉԱՐՅԱՆԻ ծննդյան 100-ամյակը:

Ա.Քոչարյանը ծնվել է 1913թ. հոկտեմբերի 15-ին Լոռու, Հ.Թումանյանի հայրենի Դսեղ գյուղում: Դպրոցն ավարտելով ուսումնառությունը շարունակել է Թիֆլիսի Անդրկովկասյան երկրաբանական-հետախուզական տեխնիկումում, որը գերազանց ավարտելուց հետո, աշխատել է Վրաստանի Ճիաթուրի մանգանի հանքավայրում որպես տեխնիկ-հետախույզ:

1935-1940թթ. Ա.Քոչարյանը սովորել է Երևանի պետական համալսարանի նորաբաց երկրաբանական ֆակուլտետում, որն ավարտելով 1940-1945թթ. աշխատել է ՀԽՍՀ ԳԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտում որպես գիտական աշխատող: Զբաղվել է բազմակողմանի երկրաբանական հետազոտություններով Ղափանի պղինձ-հրաքարային հանքային դաշտի սահմաններում: Աշխատանքների արդյունքներ ամփոփվել և ներկայացվել են որպես ատենախոսություն, որի համար 1945թ. նրան շնորհվել է երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեքնածուի աստիճան:

1970թ. Ա.Քոչարյանը Մոսկվայում հաջողությամբ պաշտպանում է դոկտորական ատենախոսություն, նվիրված Հանրապետության տարածքում հազվագյուտ տարրերի տեղաբաշխման օրինաչափությունների բացահայտման:

1945-1947թթ. Ա.Քոչարյանը աշխատում է ԽՍՀՄ Գունավոր մետալուրգիայի նախարարության «Արմցվետետոագվեդկա» կազմակերպության արտադրա-տեխնիկական բաժնի պետի պաշտոնում:

1950-1961թթ. Ա.Քոչարյանը աշխատանքի է անցնում ԽՍՀՄ Երկրաբանության մինիստրության մասնագիտացված “Գրոմովյան” արշավախմբի գլխավոր երկրաբանի ապա գլխավոր ինժեների և արշավախմբի պետի տեղակալի պաշտոններում: Նրա անմի-

ջական ղեկավարությամբ ու մասնակցությամբ իրականացվում են լայնածավալ աշխատանքներ Հայաստանի տարացքում հազվագյուտ՝ գլխավորապես ուրանի հանքային հումքի կուտակումների որոնման և հետախուզման, ինչպես նաև դրանց օգտագործման հեռանկարների որոշման ուղղությամբ:

1961-ից մինչև իր վախճանը (1986թ., հուլիսի 30-ին) Ա.Քոչարյանը կրկին աշխատում էր ՀՀ ԳԱԱ ԵԳԻ-ում՝ սկզբում գիտության գծով փոխտնօրենի, իսկ 1967-1971թթ. տնօրենի պաշտոններում:

Ա.Քոչարյանը երկարամյա գիտական աշխատանքներին բնորոշ էին հետազոտությունների լայն շրջանակ, մեծ պատասխանատվություն և նվիրվածություն: Նա զբաղվել է Հայաստանի տարբեր մետաղական և ոչ մետաղական հանքային հումքի տեսակների (պղինձ, մանգան, շինանյութեր, ապակու հումք, բնական ներկանյութեր և այլն) ուսումնասիրության և դրանց օգտագործման հեռանկարների հարցերով: Ա.Քոչարյանի հետազոտությունների կարևոր մաս են կազմել հատկապես հանքապետության տարացքում հազվագյուտ տարրերի տարածման, տեղաբաշխման և կուտակման օրինաչափությունների բացահայտման, ինչպես նաև դրանց հանքավայրերի և երևակումների առաջացման և գնահատման գիտական վերծրության և հնարավոր կիրառման առնչվող հարցեր:

Գիտահետազոտական աշխատանքին զուգընթաց, Ա. Քոչարյանը զբաղվել է նաև մանկավարժական գործունեությամբ: Շուրջ երկու տասնամյակ նա Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում դասավանդել է օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանություն առարկան:

Անվանի երկրաբանը 40-ից ավելի տպագիր աշխատությունների և շուրջ 200 հաշվետվությունների, գրախոսականների, ինչպես նաև բազում գիտահանրամատչելի հրատարակումների հեղինակ է: Զգալի են Ա.Քոչարյանի ծառայությունները նաև երկրաբանական գիտության պատմության բնագավառներում: Նա եղել է “Հայաստանի երկրաբանական ուսումնասիրվածություն” բազմահատորյակի գլխավոր խմբագիրը, զբաղվել է խմբագրական գործունեությամբ, ինչպես նաև մայրենի լեզվով մասնագիտական տերմիններ մշակմամբ, բազմիցս հանդես եկել երկրաբանական տարբեր հարցերին նվիրված զեկուցումներով ու հոդվածներով:

Ա.Քոչարյանի բազմամյա գործունեության զգալի հատվածը, հատկապես Երկրաբանական գիտությունների ինստիտուտի տնօրենի և փոխտնօրենի պաշտոնավարման տարիներին, նվիրված է եղել նաև գիտակազմակերպական աշխատանքներին: Նա տարիներ շարունակ հանդիսացել է “Հայկական հանրագիտարանի” երկրաբանական սեկցիայի, “Հայաստանի բնություն”, ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրությունների անդամ:

Հանրապետության ընդերքի ուսումնասիրման և մասնագիտական երիտասարդ կադրերի պատրաստման գործում ցուցաբերած

Երկարամյա, մեծ ավանդի համար Ա.Քոչարյանը պարգևատրվել է մի շարք Կառավարական պարգևներով և ՀՄԽՀ Գերագույն խորհրդի Պատվոգրով, նրան շնորհվել է «Հայաստանի վաստակավոր երկրաբան» պատվավոր կոչումը:

Ա.Քոչարյանի՝ Հայաստանի երկրաբանական ծառայության վաստակաշատ, ճանաչված գործիչի, նվիրյալ քաղաքացու, Մեծ Լոռեցու՝ Հովհաննես Թումանյանի գերդաստանի ներկայացուցիչներից մեկի, և միեվնույն ժամանակ արտակարգ համեստ, պարկեշտ, ընտանիքին նվիրված անձնավորության կերպարը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանության գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ «Գիտություններ Երկրի մասին» տեղեկագրի խմբագրություն

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԳՐԻԳՈՐԻ ՇԻՐԻՆՅԱՆ
(ծննդյան 90-ամյակին)



Լրացավ վաստակաշատ երկրաբան, ճանաչված հրաբխագետ, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի հրաբխագիտության լաբորատորիայի բազմամյա ղեկավար, Հայաստանի վաստակավոր երկրաբան, գիտությունների թեկնածու Կոնստանտին Գրիգորի Շիրինյանի ծննդյան 90-ամյակը:

Կ.Շիրինյանը ծնվել է 1923թ. հունվարի 25-ին, Վանաձոր (Կիրովական) քաղաքում, զինծառայողի ընտանիքում, վախճանվել է 2006թ., Երևանում:

1940թ. ավարտել է Երևանի Շահումյանի անվան միջնակարգ դպրոցը և ընդունվել Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ:

1941թ. Կ.Շիրինյանը զորակոչվել է Սովետական բանակ, 1942թ. ավարտել է Լենինգրադի երրորդ հրետանային ուսումնարանը լեյտենանտի կոչումով, 1942-1944 թթ. ծառայել է Մոսկվայի ռազմական օկրուգի 20-րդ պահեստային դահուկային բրիգադում, այնուհետև՝ Բելոռուսական զինվորական օկրուգի ուսումնական հրաձգային դիվիզիայում:

Կ.Շիրինյանը 1946թ. զորացրվել է և շարունակել ուսումը Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետում:

1950թ., ավարտելով համալսարանը, ընդունվել է ՀՍՍՀ ԵԳԻ ասպիրանտուրա “Հրաբխագիտություն” մասնագիտությամբ, սովորել ակադեմիկոս Ա.Զավարիցկու ղեկավարությամբ: 1954թ. Մոսկվայում, ԽՍՀՄ ԳԱ Մետաղային հանքավայրերի երկրաբանության, պետրոգրաֆիայի, միներալաբանության և երկրաքիմիայի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն “Հայաստանի որոշ հանքավայրերի չորրորդական հասակի տուֆերը և տուֆալավաները և նրանց ֆիզիկամեխանիկական հատկությունների կախվածությունը տեղադրման պայմաններից” թեմայով, արժանանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

1953թ.-ից Կ.Շիրինյանն անընդմեջ աշխատել է ԵԳԻ-ում որպես գիտաշխատող, 1955-1957թթ.՝ որպես գիտքարտուղար, 1963-1987թթ.՝ հրաբխագիտության բաժնի վարիչ, իսկ այնուհետև, մինչև իր կյանքի վերջը, որպես առաջատար գիտաշխատող:

Կ.Շիրինյանի երկարամյա գիտական հետազոտությունները նվիրված են եղել Հայաստանի նորագույն, պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխականությանն առնչվող բազմաթիվ հարցերի ուսումնասիրությանը: Արդյունքում ստորաբաժանվել են հրաբխային կառույցների առանձնահատկությունները և նրանց տեղաբաշխման ու զարգացման օրինաչափությունները, առանձնացվել են հրաբխային ժայթքումների տիպերը: Նրա կողմից մեծ ուշադրություն է դարձվել հրաբխածին տարաֆազիալ՝ տուֆերի, լավաների, խարամների, պեմզաների և այլ տիպի գոյացումների քիմիական, միներալային կազմին և պետրոքիմիական առանձնահատկություններին: Կ.Շիրինյանի կողմից իրականացված հետազոտությունները հնարավոր դարձրին առավել մանրամասնությամբ ստորաբաժանել Հայաստանում լայն տարածում ունեցող տուֆերը և տուֆալավաները, բացահայտել նրանց առաջացման պայմանները, պետրոգրաֆիական կազմի և ֆիզիկամեխանիկական հատկանիշների բնութագրերը, ինչպես նաև ժողտնտեսության տարբեր ոլորտներում կիրառման հնարավորությունները: Այդ բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները ամփոփվել են “Հայաստանի հրաբխային տուֆերը և տուֆալավաները” մենագրության մեջ (1961):

Կ.Շիրինյանի աշխատանքներում բազմիցս քննարկվել են նաև հրաբխագիտական առանձին տեսական հարցեր՝ նվիրված հրաբխայնության զարգացման առանձնահատկությունների և երկրակեղևում հրաբխային օջախների տեղաբաշխման, նրանցում տարբեր P-T պայմաններում ընթացող պրոցեսներին և ֆիզիկաքիմիական բնութագրերին: Բացի այդ, նրա հոդվածներում անդրադարձներ են կատարվել նաև հրաբխայնության և սելսմիկայի, հրաբխականության ու նավթաբերության փոխկապակցվածության, ինչպես նաև ընդերքի ջերմային էներգիայի օգտագործման հեռանկարային հարցերին:

Հրաբխագիտության լաբորատորիայի ղեկավարման տարիներին Կ.Շիրինյանը առանձնահատուկ ուշադրությամբ և հոգատարությամբ է վերաբերվել երիտասարդ մասնագետների կայացմանը: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մի շարք թեկնածուական ատենախոսություններ, ուսումնասիրվել են Հայաստանի տարածքի պլիոցեն-չորրորդական հասակի հրաբխային շրջանները: Կ.Շիրինյանի ղեկավարությամբ կազմվել է Հայաստանի տարածքում հայտնի հրաբուխների եռահատոր եզակի կատալոգ (1974), որում ներառվել է հրաբուխների երկրաձևաբանական, ապարների վերաբերյալ պետրոգրաֆիական և քիմիական տեղեկատվություն, ինչն ուղեկցվել է հրաբուխների տեղաբաշխման սխեմատիկ քարտեզով, ինչպես նաև կազմվել է հրաբխային խարամների կատալոգ:

Կ.Շիրինյանը հեղինակ և համահեղինակ է մոտ 160 գիտական աշխատությունների, 10-ից ավելի հաշվետվությունների, ինչպես նաև մի շարք գիտահանրամատչելի հոդվածների, նվիրված մաս-

նավորապես հրաբուխներին, բնական երկրաբանական հուշարձանների պահպանման հարցերին: Նա մեծ հեղինակություն էր վայելում նախկին ԽՍՀՄ և արտասահմանյան հրաբխագետների շրջանում: Կ.Շիրինյանը գիտական զեկուցումներով բազմիցս հանդես է եկել Միջազգային հրաբխագիտական գիտաժողովներում՝ Ռուսաստանում, Կանադայում, Անգլիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Չեխոսլովակիայում:

Կ.Շիրինյանը երկար տարիներ Համամիութենական միներալաբանական ընկերության Հայկական բաժանմունքի նախագահի տեղակալն էր, Մոլորակաբանության Միջազգային ասոցիացիայի անդամ, Կովկասի միջգերատեսչական պետրոգրաֆիական հանձնախմբի նախագահի տեղակալ, “Հրաբխականություն և սելսմաբանություն” գիտական ամսագրի խմբագրական խորհրդի անդամ, ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրության անդամ, միաժամանակ ակտիվ աշխատանք էր կատարում որպես Հայկական Հանրագիտարանի գիտական խմբագրության երկրաբանության բաժանմունքի անդամ:

Կ.Շիրինյանը, բեղմնավոր գիտական աշխատանքներին զուգընթաց, վարում էր նաև ակտիվ քաղաքական-հասարակական գործունեություն: Նույնիսկ իր կյանքի վերջին տարիներին նա մեծ ոգևորությամբ մասնակցում էր արշավախմբային աշխատանքներին, երիտասարդ աշխատակիցների հետ բարձրանում հրաբուխների գագաթը, սիրով կիսում իր հարուստ փորձն ու գիտելիքները:

Կ.Շիրինյանի հայրենանվեր և բազմամյա արգասավոր գիտական և հասարակական գործունեությունը գնահատվել է Ռազմական և Պետական պարգևներով, Վաստակագրերով, իսկ 1985թ. նրան շնորհվել է “ՀՍՍՀ վաստակավոր երկրաբան” պատվավոր կոչումը:

Կ.Շիրինյանը գիտությանը նվիրված, արտակարգ համեստ, բարեկիրթ և ազնիվ անձնավորություն էր և հիբրավի վայելում էր Ինստիտուտի ողջ կոլեկտիվի հարգանքը: Նրա՝ արժանի քաղաքացու, ընտանիքի օրինակելի հոր և ամուսնու, լավ գիտնականի և ընկերոջ հիշատակը միշտ կմնա գործընկերների և բոլոր նրան ճանաչողների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն

ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՔԱՐԱՄՅԱՆ
(ծննդյան 90-ամյակին)



2013թ. լրանում է բազմավաստակ գիտնական, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտության գծով փոխտնօրեն, Քաջարանի գիտահետազոտական բազայի վարիչ, Հայաստանի մետաղական հանքավայրերի ճանաչված հետազոտող, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր, Հայրենական Մեծ պատերազմի մասնակից, երկրաբանա-հանքաբանական գիտությունների դոկտոր Կոնստանտին Անդրանիկի Քարամյանի ծննդյան 90-ամյակը:

Կ.Քարամյանը ծնվել է Երևանում, 1923թ. դեկտեմբերի 7-ին, ծառայողի ընտանիքում: Վախճանվել է 1986թ. ապրիլի 3-ին, Երևանում:

1941թ., դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, Կ.Քարամյանը 18 տարեկան հասակում, որպես կամավոր մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Թբիլիսիի հրետանային ուսումնարանն ավարտելուց հետո, կրտսեր լեյտենանտի կոչումով, նա մեկնում է ռազմաճակատ: Մասնակցել է Ղրիմում, Ստալինգրադում, հարավային Ուկրաինայում և Մերձբալթիկայում մղված ճակատամարտերին: Կ.Քարամյանը արժանացել է «Կարմիր աստղ» երկու շքանշանների, «Ստալինգրադի պաշտպանության համար», «Քենիգսբերգի գրավման համար», «Գերմանիայի դեմ հաղթանակի համար» և այլ մարտական պարգևների:

1946թ., պատերազմի ավարտից հետո, Կ.Քարամյանը ընդունվում է Երևանի պետական համալսարանի երկրաբանական ֆակուլտետ և, ավարտելով այն, շարունակում է ուսումը ՀԽՍՀ ԳԱԱ ԵԳԻ ասպիրանտուրայում՝ «Մետաղական հանքավայրեր» մասնագիտությամբ: 1956թ. նա Մոսկվայում հաջողությամբ պաշտպանում է «Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կառուցվածքը և առաջացման պայմանները» թեմայով, ատենախոսությանը՝ արժանանալով երկրաբանա-հանքաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի:

Դեռ այդ տարիներին դրսևորվեց նրա, որպես հետազոտողի, ձիրքը՝ Չանգեզուրի մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանությանն առնչվող երևույթների բազմակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրման, հիդրոթերմալ պրոցեսների բացահայտման, մագմայականության զարգացման և հանքառաջաց-

ման փոխկապակցվածության պրոբլեմների վերծանման ասպարեզում:

Ամփոփելով այդ աշխատանքները, Կ.Քարամյանը 1976թ. Թբիլիսիում, Հանքային հումքի Կովկասյան ինստիտուտում, պաշտպանեց դոկտորական ատենախոսություն «Զանգեզուրի հանքային շրջանի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի երկրաբանական կառուցվածքը, ստրուկտուրաները և ձևավորման պայմանները» թեմայով:

Կ.Քարամյանի կազմակերպչական ձիրքը վառ դրսևորվեց ԵԳԻ Քաջարանի գիտահետազոտական բազայի ղեկավարի (1957-1984թթ) և ԵԳԻ գիտության գծով փոխտնօրենի (1967-1971թթ.) պաշտոնավարման տարիներին: Նրա անմիջական մասնակցությամբ ու ղեկավարությամբ երիտասարդ հետազոտողների խումբը երկար տարիներ նպատակաուղղված զբաղվել է Զանգեզուրի հանքային շրջանի և, առաջին հերթին, Քաջարանի ու Ագարակի պղինձ-մոլիբդենային հանքավայրերի երկրաբանական կառուցվածքի և առաջացման պայմանների համալիր և մանրամասն ուսումնասիրություններով: Զուգահեռաբար ուսումնասիրվել են Հարավային Կովկասում խոշորագույն՝ Մեղրու մագմայական զանգվածի ձևավորման հարցերը, որոնք ուղեկցվել են տարբեր մասշտաբների երկրաբանական և մասնագիտացված քարտեզների կազմման աշխատանքներով: Բացի նշանակալի գիտական արժեքներ կայացնելուց, այդ աշխատանքների արդյունքները մեծապես նպաստեցին արագ և նպատակաուղղված օժանդակելու հանքային շրջանի հանքավայրերի շահագործման ընթացքում ծագող բազում երկրաբանական խնդիրների լուծման գիտական հիմնավորումներին: Մասնավորապես դրանք երկրաբանական հիմք հանդիսացան նախկին ԽՍՀՄ Պաշարների Պետական Հանձնաժողովի կողմից Քաջարանի հանքավայրի ընդհանուր պաշարների հաստատման հարցում: Այդ աշխատանքի համար Կ.Քարամյանը համահեղինակությամբ արժանացել է ԽՍՀՄ Պետական մրցանակի (1989թ.):

Նրա ջանքերի շնորհիվ Քաջարանում կազմակերպվել են գիտական լաբորատորիաներ, ստեղծվել և ներկայումս էլ գործում է երկրաբանական թանգարան, որտեղ ցուցադրված է հանքային շրջանի ապարների և տարբեր հանքավայրերի հանքանյութերի ներկայացուցչական եզակի նմուշների հավաքածու, որն ունի մեծ գիտական, ճանաչողական և պատմական արժեք:

Շատ լայն և բազմակողմանի են եղել Կ.Քարամյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները: Նա հեղինակ և համահեղինակ է 6 մենագրությունների և ավելի քան 90 գիտական աշխատությունների, նվիրված Զանգեզուրի շրջանի երկրաբանությանն առնչվող տարբեր հարցերին, որոնք հրատարակված են միջազգային, համամիութենական և հանրապետական գիտական մամուլում: Դրանցից հատուկ հիշատակման են արժանի «Զանգեզուրի

հանքային շրջանի երկրաբանական կառուցվածքի, տեկտոնիկայի և հանքաբերության առանձնահատկությունները» (1978թ.), «Դաստակերտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի կառուցվածքը և ձևավորման պայմանները» (1962), «Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրը» (1969), և այլ աշխատություններ: Նա զեկուցումներով բազմիցս մասնակցել է արտասահմանյան երկրներում կայացած մի շարք միջազգային գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին, ներկայացնելով հանրապետությունում պղինձ-մոլիբդեն-պորֆիրային ֆորմացիայի հանքավայրերի ուսումնասիրման ասպարեզում ձեռք բերած նվաճումները, որոնք ունեն զգալի գիտական արժեք:

Կ.Քարամյանի կարճատև, սակայն շատ բեղմնավոր, իմաստալից ու ակտիվ կյանքը Հայրենիքին և իր սիրած գործին մեծ նվիրումով ծառայելու վառ օրինակ է: Մեծ հայրենասերի, քաղաքացու, գիտության ու ընտանիքին նվիրված անձնավորության, միաժամանակ արտակարգ համեստ և կենսախինդ գործընկերոջ կերպարը միշտ վառ կմնա բոլոր նրան ճանաչողների հիշողության մեջ:

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ,
ՀՀ ԳԱԱ “Գիտություններ Երկրի մասին” տեղեկագրի խմբագրություն